№ 175 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 12

1908

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 12 № 175

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ" Базарная ул. д. Тамамшева № 16. Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(36-րդ ՏԱՐԻ)
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝
ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 5 ՌՈՒԲԼԻ
Ամսական ՄԷԿ րուբլի

Ամերիկա տարեկան	6 դօլլար
Եւրոպա »	30 ֆրանկ
Պարսկաստան »	10 րուբլի
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել	40 կոպ.

ԱՐՁԱՆԱԳՐԵԼ ՏՈՒԺԸ

Մեր ժողոված տեղեկութիւններ նպաստաւոր չեն Երեւանեան և Կարսի նահանգների գարնանացանի բերքի մասին։

Այն ժամանակ, երբ Թիֆլիսի և Գանձակի նահանգներում անձրեւների առատութիւնը աչքի ընկնող երեւոյթ էր կազմում, Երեւանեան և Կարսի նահանգները, ընդհակառակը, տառապում էին երկարատեւ երաշտից։

Ճիշտ է, գարնան սկզբին ամեն տեղ էլ անձրեւներ շատ եկան, բայց ամառուայ առաջին ամսից յետոյ անձրեւները դադարեցին հարաւային Անդրկովկասում։ Եւ ներկայումս մենք ընդարձակ տարածութիւնների վրա տեսնում ենք փոքր, կարճաբոյս, նօսր ցանքսեր, որոնք չեն կարող տալ գիւղական աշխատաւորին ոչ միայն միջին բերքը, այլ մի քանի շրջաններում նոյնիսկ սերմացուի քանակը։

Համեմատաբար աւելի նպաստաւոր վիճակի մէջ են բոլոր այն գիւղերը, որոնք հնարաւորութիւն ունէին գէթ մասամբ ջրելու իրանց արտերը կամ որոնց ցանքսերը չափազանց ենթակայ չեն արևակէզին։ Մենք չենք խօսում աշնանացանի մասին, որը լաւ բերք տուեց գիւղացուն։

Ծարահարձերը, որտեղ բուսականութիւնը աւելի ուշ է սկսում զարգանալ և որոնք այդ պատճառով չը կարողացան զգալի չափով օգտվել գարնանային անձրեւներից, ենթարկվեցին երաշտի՝ բուսականութեան աճման ամենաէական շրջաններում, և շատ դժուարութեամբ կարող են կազդուրել իրանց ցանքսերի գոնէ մի մասը, եթէ այսուհետեւ անձրեւներ գան։ Անձրեւներից կարող են փոքր ի շատէ շահվել շատ բարձր դիրք ունեցող արտերը, որոնց հունձը կատարվում է օգոստոսի վերջին կամ նոյնիսկ սեպտեմբերի սկզբին։

Մի շարք գիւղեր էլ վնասվեցին կարկուտից, մկներից և ուրիշ ձախորդութիւններից։

Մենք անցեալ տարիների անբերրիութեան առիթով շատ անգամ բացատրել ենք, որ վնասված տեղերի գիւղացիները պէտք է իրանց ցանքսերի դրութեան մասին արձանագրութիւն կազմեն պաշտօնական եղանակով, որպէսզի ապագայում, երբ նրանք դիմումներ անելու լինեն կառավարութեանը՝ հնարաւորութիւն ունենան նպաստներ և դիւրութիւններ ստանալու կառավարութիւնից, որովհետեւ վերջինս օժանդակութիւն է տալիս միայն այն ժամանակ, երբ նրա ձեռքին կան վաւերական թղթեր և ցուցումներ տեղի ունեցած դժբաղդութիւնների և վնասների մեծութեան մասին։

Այն գիւղերը, որոնք անկարող են լինելու իրանց միջոցներով հայթայթել իրանց ապրուստը և ստիպված են լինելու կառավարութեանը դիմելու, թող զանցառու չը լինեն պաշտօնապէս արձանագրել տալու իրանց տնտեսութեան հասած վնասները և աշխատեն այդ վնասները արտայայտել կարելիին չափ ճիշտ և ստոյգ թւերով։

Մենք նպատակայարմար համարեցինք նորից յիշեցնել այդ պարտաւորութեան մասին, որովհետեւ վնասված տեղերի տարածութիւնը փոքր չէ և կարիքը մեծ է լինելու որոշ շրջաններում։

Ս. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Երէկ, օգոստոսի 11-ին, Սամարայից ստացանք հետեւեալ հեռագիրը, որի վրա հրավիրում ենք Թիւրքահայերի ժողովում ընտրված յանձնաժողովի ուշադրութիւնը.

Ընդունեցէք տեղեկութիւն։ Հարկաւոր է անյապաղ օգնութիւն։ Սրանից երկու ամիս առաջ Կարսի շրջանից, Բալկուխ գիւղից, էտապով Սամարա աքսորեցին 37 Թիւրքահայերից բաղկացած ութ ընտանիք Ալաշկերտի վիճակից։

Գաղթականները անգործութեան չունեն։ Սակայն բոլորն էլ ցանկանում են վերադառնալ հայրենիք։

Հարկաւոր է միջնորդութիւն յարուցել պատշաճաւոր իշխանութեան առաջ, որ թոյլատրվի նրանց վերադառնալ անտապաղ։

Երեխաները շատ են տանջվում զանազան հիւանդութիւններից, սաքիքից։

Եթէ հարկաւոր է լրացուցիչ տեղեկութիւններ, հեռագրեցէք Սամարա՝ Գէորգեանին։

Համակրող տեղական հայերը

Խմբագրութիւնս իր կողմից հնար եղած օգնութիւնը չի զլանայ անելու այս խնդրի առիթով։

—

Պետերբուրգ, 9 օգոստոսի

Երեկոյեան ժամը 7 և 40 րոպէին ժամանեց Կովկասի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը։ Կայարանում հանդիպման ժամանակ ներկայ էին դուստրը՝ կոմսուհի Շուվալօվան, բարոն Նօլդէն, իշխան Նակաշիձէն և բարձր հասարակութեան ուրիշ ներկայացուցիչներ և կոմսի նախկին ստորադրեալ պաշտօնեաները, երբ նա պալատի մինիստր էր։ Կոմսուհուն մատուցվեց ծաղիկների մի փունջ։ («Հ. Գ.»)

—

«Вечеръ» լրագիրը վճռական կերպով ասում է, որ կովկասեան Փոխարքայ կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը այլեւս չէ վերադառնալու Կովկաս, և որ փոխարքայութիւնը բոլորովին վերացվում է։ Նորից կը նշանակվի գլխաւոր հրամանատար, որի պաշտօնի համար թեկնածուներ համարւում են գեն.-ադիւտանտ Ն. Ա. Կուրոպատկինին և Զուրգ-բալթիական երկրի գեներալ-նահանգապետ բարոն Միլլեր-Զակոմելսկուն։

—

Պետերբուրգ, 9 օգոստոսի

Ժանտախտի դէմ մաքառող յանձնաժողովի տեղեկութիւնների համաձայն, օգոստոսի 1-ից մինչև 8-ը ամբողջ կայսրութեան մէջ եղել է խոլերայով հիւանդանալու 1145 դէպք, որից 517-ը վերջացել է մահով։ («Հ. Գ.»)

—

(Սեփ. թղթ.)

Բաթում, 9 օգոստոսի

Երէկ, ամսիս 8-ին, երեկոյեան ժամը $8^1/_2$-ի մօտերը քաղաքիս ամենաբանուկ տեղում, արտիստիկ թատրոնի դիմաց, ատրճանակի մի հարուածով անմիջապէս մահացաւ տեղիս բանտի վերակացուն։

Ահաբեկիչը մնաց անյայտ։

Դիակը տարվեց քաղաքային հիւանդանոց։

—

Օգոստոսի 9-ին Պետերբուրգից հեռագրում են «Баку» լրագրին.

Երէկ տեղի ունեցաւ ճաշկերոյթ վըբորգեան կալանաւորների ազատութեան առիթով։ Ներկայ էին մօտ 200 ներկայացուցիչներ երեք Դումաների, հասարակական կազմակերպութիւնների, գրականագէտների, գիտնականների կողմից և այլն։ Արտասանվել են շատ ճառեր։

—

Տանժեր, 9 օգոստոսի

Իշխանութիւններն անթել հեռագրով տեղեկութիւն ստացան, որ Աբդիւլ-Ազիզի զօրաբանակի առաջապահ գունդը ջարդվել է Մուլէյ-Հաֆիդից Մարոկէշից 50 մղոն հեռաւորութեան վրա։

Այնուհետեւ արժանահաւատ աղբիւրներից հաղորդում են, որ Աբդիւլ-Ազիզի ամբողջ զօրաբանակը յարձակման ենթարկվելով Մուլէյ-Հաֆիդի կողմից, լիակատար պարտութիւն կրեց և ցիրուցան փախուստի դիմեց։

Հաղորդում են, որ Աբդիւլ-Ազիզը գերի է ընկել։ Ուրիշ տեղեկութիւնների համաձայն, նրան աջողվել է փախչել։ («Հ. Գ.»)

—

(Սեփ. թղթ.)

Վաղարշապատ, 8 օգոստոսի

Ամսիս 2-ին Կ. Պօլսի պատրիարք. տեղապահ Եղիշէ եպ. Դուրեանը հեռագրով զեկուցանում է կաթողիկոս. տեղակալին, թէ դեռ նա չէ ստացել կաթողիկոս. ընտրութեան ծանուցագրերը։

Հաստատ աղբիւրից իմացայ, որ սինօդը ամսիս 6-ին դիմել է Կովկասի Փոխարքային, որպէսզի սա միջնորդ հանդիսանայ մինիստրութեան առաջ՝ ծանուցագրերը ուղարկելու համար։

Այսօր երեկոյեան ժամը 6-ին Ներսիսեան լճի ափին հաւաքվել էին մօտ 25—30 Թիւրքահայեր և տաք տաք վիճում էին միմեանց հետ. բոլորի երեսին էլ փայլում էր ուրախ ժպիտ։ Մի ալեզարդ ծերունի այս ուրախութիւնը բացատրեց Թիւրքիայի սահմանադրութեան մասին ստացված լուրերով։ Թիւրքահայերը հաւաքվել էին՝ մտածելու իրանց երկիրը վերադառնալու մասին. բայց որովհետեւ Էջմիածնում բնակվող բոլոր Թիւրքահայերը այդ ժողովին ներկայ չէին, դրա համար էլ ժողովը յետաձգվեց այս կիրակի լինելու համար։ Հաւաքվածները որոշեցին եկող կիրակի ընտրել երկու մարդ, որոնք կը գնան Երևան և այնտեղի «Թիւրքահայերի միութեան» հետ կը խորհրդակցեն երկիր գնալու մասին։

Թունիկ

—

Լրագիրները վճռականապէս հերքում են Եդուարդ Թագաւորի Կ. Պօլիս այցելելու մասին տարածված լուրը։ Խնդիրը նրանումն է, որ սուլթանը չէ կարող փոխ-այցելութիւն անել, որովհետեւ ղուրանի որոշմամբ, այն բոլոր երկիրները, ուր ոտք է դնում սուլթանը, դառնում է իր սեփականութիւն։ Իրաւ է, կայ մի բացառութիւն, որ թէև սուլթանը համարվում է սեփականատէր այդ երկրի, բայց նա իրաւունք ունի վեհանձնօրէն զիջել իր սեփականատիրութեան իրաւունքը նախկին տէրերին։ Յամենայն դէպս կասկածելի է, որ Եդուարդ թագաւորը համաձայնվի օգտվել այդ «վեհանձնութիւնից»։ („Рѣчь")

ԹԻՒՐՔԻԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՇԵՄՔԻՆ

Երիտասարդ-Թիւրքերը տարան մի նոր և շատ խոշոր յաղթութիւն։

Սուլթան Աբդիւլ-Համիդը համաձայնվեց ոչնչացնել սահմանադրական խարտիայի մէջ այն յօդուածը, որի հիման վրա սուլթանը հրաւիրում և արձակում է պարլամենտը, երբ կամենում է։

Օգուտ քաղելով այդ յօդուածից, սուլթանը հնարաւորութիւն ունէր, հետեւելով օրէնքի տառին, 30 տարի տեւողութեամբ նոյնիսկ պարլամենտ չը հրաւիրելու, որովհետեւ «նրա կարիքը չէ զգում»։ («Д. Н.»)

—

Կ. Պօլիս, 10 օգոստոսի

Օսմանեան բանկը, որ իբրև աւանս 400,000 թիւրքական ֆունտ տուեց թիւրքական նոր կառավարութեան, նոր աւանս է տալիս «հանրային պարտուց վարչութեան» եկամուտների աւելորդ գումարների տակ 200,000 ֆունտ։ («Հ. Գ.»)

—

Կալանաւորված փաշաները ժամանակաւորապէս ուղարկված են աքսոր և պարլամենտը գումարվելուց յետոյ կը յանձնվեն բարձրագոյն դատարանին։

Սօֆտաներն ու ուլեմները կրկին անգամ երդուեցին սահմանադրութեան։

Քիւրդական պարագլուխներին նախազգուշացում է ուղարկված հայերի վրա կատարվող յարձակումներին վերջ տալու համար։

Կում-Կափուի արուարձանում տեղի ունեցաւ կռիւ մի զինուորի և հայի միջև, որը առիթ դառաւ հայերի ու զօրքի ընդհարման։ Զինուորների համազարկով սպանվել են վեց հայեր։ «Միութեան և առաջադիմութեան» կոմիտէտը յայտնել է, որ խիստ միջոցներ ձեռք կառնէ այն անձանց դէմ, որոնք կը դրդեն բանւորներին գործադուլ անելու։ Օտարերկրեայ ագիտատորները անմիջապէս աքսորվում են։

Երզրումի վալին յայտարարել է իրան հակասահմանադրական. Նրան միացել են քիւրդական զօրքերը։ Փոքր-Ասիայի սարերում սահմանադրութեան հակառակորդների գործակալները եռանդուն ագիտացիա են մղում։ («Б.»)

—

«Berl. Tag.» լրագրի Կ. Պօլսի թղթակիցը հեռագրում է օգոստոսի 15-ին (Ն. տ.). «Արժանահաւատ աղբիւրից իմացայ, որ փոքր-ասիական վիլայէթներից մէկում վալին յայտնել է, որ հայերը ուզում են իրանց համար թագաւորութիւն հիմնել, որից անմիջապէս սկսվել են անկարգութիւններ։ Սպանված են մի քանի հայեր։ Կարգը խիստ վերականգնված է։ Այդ դէպքը տեղի է ունեցել 5 օր առաջ։ Մանրամասնութիւնները խիստ կերպով թագցնում են»։

—

Օգոստոսի 2-ին Պօլսում տեղի է ունեցել ընդհարում, որին մասնակցել են զօրքերը, ոստիկանութիւնը և ժողովրդական ամբոխը։

Նաւահանգստում երիտասարդ-թիւրքերի յատուկ գործակալները ասիական ափը տանող շոգենաւի մէջ նստելու պատրաստված հասարակութեան մէջ ճանաչեցին գաղտնի ոստիկանութեան նախկին կառավարիչ Բաղիր-փաշային, որը, երկու պայուսակներ բռնած, շտապ անցնում էր երիտասարդ-թիւրք օֆիցէրների առջեւից։

Անմիջապէս կալանաւորեցին նրան։ Պայուսակները, ինչպէս պարզվեց, լի էին արտասահմանեան բանկերի գըրքոյկների չէկերով և խոշոր գումարի թղթադրամներով։

Մի ակնթարթում նրա կալանաւորութեան լուրը տարածվեց քաղաքում և ժողովուրդը վազեց դէպի նաւահանգիստ։

Օֆիցէրները, երկիւղ կրելով ժողովրդական ինքնադատաստանից, զինուորներ պահանջեցին պաշտպանելու Բաղիր-փաշային, որովհետեւ նա, իբրև նախկին կառավարութեան ձեռք առած միջոցների կարեւոր վկայ ու գործադրող, հարկաւոր էր նրանց։

Ներքին գործերի մինիստրը ևս ուղարկեց պալատական գվարդիայի ալբանացի զինուորների մի խումբ՝ պաշտպանելու նրան ամբոխի վրէժխնդրութիւնից։

Բայց ամբոխը արդէն իր ձեռքն էր ձգել լրտեսների աւելի պետին և անողորմ կերպով ջարդում էր նրան։ Արդէն նրանք պատրաստվում էին նրա այլանդակված դիակը Բօսֆոր նետելու, երբ վրա հասաւ զօրքը և հազիւ բանի ուժով կորզեց նրա ձեռքից գաղտնի ոստիկանութեան կիսաշունչ շէֆին։

Սակայն այդտեղ նոր ընդհարում տեղի ունեցաւ զօրքի և ալբանական գվարդիայի միջև, երբ վերջիններս ուզում էին Բաղիր-փաշային տանել պալատ։

Երիտասարդ-Թիւրքերը դիմադրութիւն ցոյց տուին, և եռանդուն ընդհարումից յետոյ, վերջ ի վերջոյ, յաղթութիւնը մնաց երիտասարդ-թիւրքերի կողմը, որոնք և տարան իրանց՝ համարեա անշնչացած, գերուն երիտասարդ-թիւրքերի կոմիտէտի մօտ։

Լուր է պտտում, որ Բաղիրը արդէն մեռել է։ («Н. Дня»)

—

Կ. Պօլիս, 9 օգոստոսի

Ռուսաց դեսպան Զինովիէվը ներկայ էր սէլամլըքին, որից յետոյ սուլթանից ընդունվեց ունկնդրութեան։ Դեսպանը յոյս յայտնեց, որ նոր ռէժիմը հաստատ և ամրակուռ կը լինի։ Սուլթանը պատասխանեց, որ հաւատացած է իր վճռի անսասանելիութեանը և կը պահէ ազատ, ինքնակամ, անձնապէս ժողովրդին շնորհված սահմանադրութիւնը։

Սէլամլըքից յետոյ մեծ վէզիր Քեամիլ-փաշան այցելեց Զինովիէվին Բէյուքդէրէում։ («Հ. Գ.»)

—

Վիեննա, 9 օգոստոսի

«Cor. Bur.»-ին հաղորդում են Կ. Պօլսից, որ քրէական յանցաւորներին ազատելուց առաջացած երկիւղների պատճառով մեծ վէզիրը վերստին պատուիրեց բանտարկել նրանց։ («Հ. Գ.»)

—

Արքայազն Բուրհանեդդինը ընդունել է ծովային ակումբի նախագահութիւնը։ Նրա վրա մեծ յոյսեր են դրվում, որ նա կարող կը լինի ստեղծել ուժեղ մարտական նաւատորմ։

Սուլթանը շարունակում է կրճատել իր անձնական եկամուտը. Նա արձակել է 46 ֆլիգել-ադիւտանտներին։

Երիտասարդ-Թիւրքերի ընտրողական պլատֆորման իր մէջ պարունակում է զուտ պարլամենտական պահանջներ։ («Б.»)

—

Վիեննա, 10 օգոստոսի

«Cor. Bur.»-ին հեռագրում են Կ. Պօլսից, որ երիտասարդ-թիւրքերի կոմիտէտը յայտնում է, որ «Temps» լրագրի Վիեննայից ստացած այն տեղեկութիւնը՝ իբր թիւրքական պարլամենտը առաջին իսկ հերթին կը զբաղվի Բօսնիայի հարցով և կը պահանջէ պայմանագիր մեծ պետութիւնների միջամտութիւնը,— սխալ է, տենդենցիօզ և զրպարտութիւն։ Կոմիտէտը չէ ձգտում զրաւումների քաղաքականութեան, այլ ցանկանում է միայն բարենորոգումներ մտցնել թիւրքական պետութեան սահմաններում։ Կոմիտէտը մտադիր է հերքել այդ տեղեկութիւնը և վճռել է կռիւ մղել բօսնիական պրօպագանդայի դէմ։ («Հ. Գ.»)

—

Լոնդոնի մամուլը միաբերան յայտնում է, որ իրերի դրութիւնը Թիւրքիայում վերջին օրերս վատթարացել է։ Երիտասարդ Թիւրքերի կոմիտէտները, նրանց ասելով, հակայեղափոխական շարժման մասին եղած բոլոր տեղեկութիւնները ճշտութեամբ չեն հաղորդում։ Անբացատրելի է մնում մինչև այսօր էլ զինուորական մինիստրի մահվան պատճառը։ Դատաստանական-բժշկական քննութիւնը չէ հաստատել նրա թունաւորման մասին տարածված լուրը, բայց հիմք կայ կարծելու, որ նա վերջ է տուել իր կեանքին կտրելով իր երակը։ Ենթադրում են, որ ինքնասպանութեան պատճառը 4-րդ զօրաբանակի մէջ պատահած յուզմունքն է, որի վստահելիութեան համար Ռէջէբ-փաշան երաշխաւորվել էր Պօլսի կոմիտէտի առջեւ։ Խաղաղ զարգացման երաշխաւորութիւն չէ տալիս նաև «Times»-ի տուած այն լուրը, որ Էրզրումի մօտերքում, Բիթլիսում, ապստամբել են քիւրդական զօրքերը, որոնք պահանջում են հին ռէժիմի վերականգնումը։

—

Մեծ վէզիրի կարգադրութեան համաձայն, ամբողջ Մակեդոնիայում փակվել են բացառիկ դատարանները, որոնք քաղաքական գործերի քննութեամբ էին զբաղվում։

Սալոնիկից յետ է կանչված գերմանական ծառայութեան մէջ եղող գնդապետ Ֆօն-Ալտենը, որը տեղական ժանդարմէրիական ուսումնարանի դիրեկտօրն էր։ Բերլինի կիսապաշտօնական թերթերը հաստատում են, որ նրան յետ կանչելու նպատակը այն է եղել, որ ապացուցանեն երիտասարդ-թիւրքերին, թէ Գերմանիան չէ ցանկանում Թիւրքիայի ներքին գործերի մէջ խառնվել, և որ այդպիսով հնարաւորութիւն տվի նրանց իրանց սեփական ույժերով մտցնել նոր պետական կարգեր։

—

Սօֆիայից ստացված տեղեկութիւնների համաձայն, մակեդօնական բուլղարները, որ նախկին տարիներում, յունական չետաների վախից դրդված, միացել էին պատրիարքութեանը, այժմ նորից վերադառնում են էկզարխատին։ Կումանով, Պալանկա և Կրատովօ շրջանների ամբողջ գիւղերը արդէն էկզարխատին են վերադարձել։

—

Անգլիական «Times» թերթի Կ. Պոլսի թղթակիցը նկարագրում է Թիւրքական առաջին գործադուլի վերջաւորութիւնը։ Գործադուլ արած բեռնակիրները, որոնց չաջողվեց իրանց ընկերների մի մասին աշխատանքից յետ կանգնեցնել, սպառնացին ույժ գործածել։ Զինված խումբ կազմվեց և արդէն դէպի Բօսֆօրն էր շարժվում, երբ երիտասարդ թիւրքերը այդ մասին լուր ստացան։ Զինված գործադուլ անողներին մի հարկերեակ զօրք դիմաւորեց և խփոյն ցրվեց նրանց։ Միևնոյն ժամանակ երիտասարդ թիւրքերի կօմիտէտը բանակցութեան մէջ մտաւ գործադուլ անողների և նրանց տէրերի հետ։ Կողմերը հաշտվեցին, երբ օրավարձը 25 տոկոսով աւելացվեց։

—

Մեծ վտանգ է ներշնչում երիտասարդ թիւրքերին ալբանացիների մէջ սկսված խլրտումը։ Ինչպէս երևում է, նրանց մէջ ագիտացիա են անում Կ. Պոլսի կամարիլիայի էմիսարները, նրանց թւում մի ոմն Իսա-բէյ, որը Շեմսի փաշայի մօտ քարտուղարի պէս մի պաշտօն էր վարում և որը անյայտացաւ այս վերջինս սպանվելուց յետոյ։ Կ. Պոլսի էմիսարները գաղտնի խորհրդակցութիւններ են ունենում ալբանական վօյվօդներ Իսյ Բօլետինացի և Մուզաֆֆէր փաշայի հետ։ Ըստ երևոյթին ալբանացիք մտադրութիւն ունեն երիտասարդ-թիւրքերից երաշխաւորութիւն պահանջել սուլթանի անվտանգ մնալու մասին։ Երիտասարդ-թիւրքերը մտածում են խիստ միջոցներ ձեռք առնել գաւառներում դէմ։ Ասում են, որ Իսա բէյը արդէն ձերբակալված և Ռեսնէյ է ուղարկված, որ ամբոխը նրա հետ բաւականին ոչ համակրական ձևով է վարվել։ («Բեռ»)

—

Հալածանքից Կ. Պոլիս վերադարձած Ֆուադ-փաշան արտասահմանեան թղթակիցներից մէկի հետ խօսելիս պատմել է իր աքսորի մասին և արտայայտել է հայեացքներ իւրի ներկայ դրութեան մասին։

«Իմ աքսորը երկարատև տանջանք էր։ Բանից անգամ ուզեցին ինձ սպանել։ 14 անգամ թունաւորեցին, բայց, Աստուծոյ շնորհիւ, այդ բոլոր փորձերը ի դերև ելան։ Ես համառ կերպով հաւատում եմ ներկայ յեղաշրջման վերջնական բնաւորութեանը, թէկուզ հէնց այն պատճառով, որ զինուորները երդումով ուխտել են սպանել սահմանադրութեան ամեն մի հակառակորդին։ Բոլոր դաւանութիւնների պատկանողներն էլ կարող են զօրքի մէջ բարեկամաբար։ Չէ՞ որ նրանց նախահայրերը շատ անգամ են կռիւ մղել կողք-կողքի տված խալիֆների հրամանատարութեամբ։ Ես վտանգ չեմ տեսնում նոյնիսկ թափառական ցեղերի կողմից, ինչպէս, օրինակ, արաբներից։ Նրանց համար հեշտ կը լինէր ծառայել զօրքի մէջ, որովհետև ոչ ոք նրանց չի հեռացնի իրանց հայրենիքից և տարբի ծառայել օտար տեղերում։ Միջազգային խնդիրներում մենք պահանջում ենք բաց դռների քաղաքականութեան։ Ամեն մի օտար պետութիւն կարող է մեզանում բարեձև կայանքներ ձեռք բերել։ Երիտասարդ-Թիւրքիան կանչում է այն բոլորին, ինչ որ կը ծառայէ նրա առաջադիմութեան և արգասաւորութեան զարգացմանը»։

—

Սուլթանի մասին Ֆուադ-փաշան ասել է հետևեալը.

«Այնչափ է ներշնչված գռնակալութեամբ, որ նա աւելի շուտ կը հրաժարվի կեանքից, քան անսահմանափակ իշխանութիւնից»։

—

Երիտասարդ-Թիւրքերի լիդերներից մէկը —Ահմէդ Րիզա բէյը Կ. Պոլիս վերադառնալիս Բուդապեշտում խօսակցութիւն է ունեցել թերթերի թղթակիցների հետ։ Նրա ասելով երիտասարդ Թիւրքերի ծրագիրը հետևեալն է. «Թիւրքիան Թիւրքերի համար, իսկ Բալկանները՝ բալկանեան ազգութիւնների համար»։

«Մենք ուլտրա-նացիօնալիստներ ենք,— հայտնել է Ահմէդ Րիզա-բէյը—Մենք կամենում ենք բարենորոգումներ մտցնել Թիւրքիայում առանց Եւրոպայի մասնակցութեան, թէև ոչ հակառակ Եւրոպայի»։

—

Երիտասարդ-Թիւրքերի կօմիտէտի աջակցութեան շնորհիւ աջողվել է վերջ տալ Կ. Պոլսի ձիաքարշի ծառայողների գործադուլին։ Նոյն աջողութեամբ վերջացաւ նաև նաւային բանուորների գործադուլը։ Կօմիտէտը դիմել է նրանց մի կոչով, որտեղ ժառանգելով առաջիկայ պարլամենտական սեսսիան, խորհուրդ է տալիս դիմել նրան իր գանգատներով ու խնդիրներով։ Նախազգուշացված է նաև Անատօլիայի երկաթուղու գործադուլը։

—

Իր պաշտօնին վաւերացումէն յետոյ, տեղապահ Դուրեան սրբազան առաջին անգամ ըլլալով Բ. Դուռ գնաց երէկ, յուլիս 31 ին, ժամը 7 և կէսին, շնորհակալութիւն յայտնելու և նոր մինիստրներուն պաշտօնը շնորհաւորելու համար։ Ս. տեղապահին կընկերանային եկեղեցական դասէն Տ. Տ. Գնէլ, Թաթուլ, Գրիգորիս և Ղևոնդ վարդապետները, իսկ աշխարհական դասէն Տիրան էֆ. Աշնան, դօքթ. Տիգրան բէյ Աճէմեան, Մկրտիչ էֆ. Ասատեան, Վահան էֆ. Սուրէնեան և Բարթող էֆ. Թէլեան, որ առժամապէս գործակատարի պաշտօն կը վարէ։ Դուրեան սրբազան չկրցաւ տեսնել մինիստր նախագահ Քեամիլ փաշան, որ կը նախագահէր մինիստրական խորհուրդի բացառիկ նիստին։ Ն. սրբազնութիւնը փափագ յայտնեց տեսնել մեծ-եպարքոսը, կարևոր խնդիրներու վրա տեսակցելու համար։ Մեծ-եպարքոսութեան խորհրդականը Քեամիլ փաշային հաղորդեց տեղապահ հօր փափագը։ Մեծ եպարքոսը պատասխանեց, թէ Ն. սրբազնութիւնը կրնար իր խնդիրները յայտնել խորհրդականին։ Տեղապահ սրբազանը գաւառներու և մասնաւորապէս Վանայ կուսակալ Ալի Րիզայի մասին գանգատեցաւ, յարելով թէ Վանայ ոստանի վիճակը անմիջական դարմանի կը կարօտի։ Եպարքոսական խորհրդականը մեծ-եպարքոսին հաղորդեց Դուրեան սրբազանի այդ գանգատները։ Քեամիլ փաշա իր խորհրդականին յանձնարարեց յայտարարել տեղապահ հօր, թէ մինիստրական խորհուրդը անմիջապէս նկատողութեան պիտի առնէ այդ խնդիրը, և հեռագրական նոր հրամաններ պիտի ղրկուին գաւառները։ Տեղապահ սրբազանը, դարձեալ կառավարութեան աջակցութիւնը խնդրելով, մեկնեցաւ եպարքոսական պաշտօնարանէն, ուր մեծարանքներ եղան պատշաճապէս։ Ցաւօրդաբար այցելութիւն տուաւ մինիստրներուն և տեսակցեցաւ անոնց խորհրդականներուն հետ, մինիստրներուն նիստի մասնակցելուն համար։ Դուրեան սրբազանը դատական խորհրդականին ալ գանգատեցաւ Վանայ մէջ տիրող ոստանի կացութեան մասին, հարկ եղած դարման խնդրելով։ («Արևելք»)

—

Պատրիարքարան աննպաստ հեռագրեր հասած են Վանէն, Մուշէն և Դէրսիմէն։ Անկարգութիւններ տեղի կունենան Դէրսիմի մէջ, Զուն աղային գրգռումով։ Յուլիս 31 ի իրիկուն հասած հեռագրի մը նայելով Խարբերդի, Հալէպի և Տրապիզոնի բոլոր բանտարկեալները արձակուած են։ («Արևելք»)

—

Խարբերդի նահանգի Դէրսիմ գաւառին քիւրդ ցեղերը, անցեալ տարուան պէս, այս տարի ալ շրջակայ գիւղերուն վրայ յարձակելով ասպատակութիւններ և վայրագութիւններ գործեցին։ Ֆերիկ Նէշէթ փաշայի հրամանատարութեամբ ղրկուած զինուորներ, չորս թեւի բաժնուած, յարձակեցան Բայզան լերան վրայ, ուր համախմբուած էին քիւրդերը։ Նէշէթ փաշա կը հեռագրէ, թէ կատարուած բուռն յարձակումներուն հետևանքով քիւրդերը մեծամեծ կորուստներ ունենալով փախեր են։ Առանց պետերն ալ սպաններ կամ վիրաւորուեր են։ Կատարուած յարձակումներուն սաստկութիւնը երկիւղ ազդեր է քիւրդերուն, որոնք խումբ խումբ գիժեալ անձնատուր կըլլան։ Զինուորները, հետևեալ օրը, երեք թեւի վրայ յառաջանալով, քանդեր են ասպատակներուն ապաստարանները։ Հետապնդումները պիտի շարունակուին մինչև աւազակներուն ամենէն վերջին ապաստարանները։ Յուսալի է, որ զինուորական այդ գործողութիւնը կատարելապէս յաջողի և այդ քիւրդ ցեղերը բոլորովին զրկուին իրենց ասպատակութիւններէն։ («Արևելք»)

—

Կ. Պոլսում ցնծալից ընդունելութիւն են պատրաստում Միդհատ փաշայի որդուն՝ Ալի Հէյդար-Միդհատին։ Երկար տարիներ աքսորական լինելուց յետոյ նա հայրենիք է վերադառնում Պարիզից, ուր նա երիտասարդ-Թիւրքերի կօմիտէտի գլխին էր կանգնած։ Շատ հետաքրքրական է այն նամակը, որ լրագիրներում հրատարակեց Միդհատ փաշայի որդին։

«Երկու օրից յետոյ,—գրում է նա,—ես վերադառնում եմ Կ. Պոլիս։ Հիմա, երբ սահմանադրութիւնը վերականգնված է և Թիւրքիան ազատ է, ես բաղձում եմ հայրենի երկիրս վերադառնալու համար։ Այժմ ես կարող եմ կատարել այն խոստումս, որ ես արել էի Նորին մեծութեան Աբդիւլ-Համիդին, այն է՝ մոռացութեան տալ անցեալը, եթէ նա կը կատարի ազգի ցանկութիւնը։ Սահմանադրութեան դէմ կատարած յանցանք կը համարէի ես, եթէ, հայրենիք վերադառնալուց յետոյ, չը գործէի իբրև Աբդիւլ-Համիդի հաւատարիմ հպատակ։ Իմ աչքում նա սահմանադրական կայսր է, իսկ անցեալը մոռացված է ամբողջ ժողովրդի կողմից և, ի հարկէ, նաև իմ կողմից, իբրև շատերից մէկը»։ («Б. В.»)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

Թաւրիզը նուաճելու համար ուղարկված Էյն-ուդ-Դօվլէն գերի է ընկել յեղափոխականների ձեռքը։

Շահը տեղեկութիւն ստանալով այդ մասին, արտակարգ նիստի հրաւիրեց մինիստրներին և ականաւոր պաշտպանողականներին Թաւրիզի և Սպահանի գրաւման մասին խորհելու։

Ռուսաց դեսպան Հարթվիգի խորհրդով, շահը արգելեց շէյխ Փէյզուլլային իր ճառերով գրգռել ջումա մզկիթում հաւաքված ամբոխի մոլեռանդութեան բնազդները հակասահմանադրական ցոյցեր անելու դրդումներով։ Շահը հրամայից մզկիթից դուրս անել տգէտ ամբոխը, հաւաքել մզկիթի շուրջը դրված վրանները և ընդհատել ջարդարար քարոզները։

Ասում են, որ շահը մտադիր է սենատի նմանութեամբ հասարակական գործիչներից ժողով հրաւիրել, որպէս թէ սահմանադրութեան ձևերը և նրա իրագործման միջոցները մշակելու համար։ («Б.»)

—

Յաղթութեամբ յափշտակված, շահը չէ թագցնում իր ուրախութիւնը և թշնամական դիտաւորութիւնները սահմանադրութեան վերաբերմամբ։

Նա Ալիի Ծննդեան տօնին հանդիսաւոր կերպով յայտնել է, որ իրան վերջապէս աջողվեց ազատել երկիրը անհաւատարիմներից. իսկ նա անհաւատարիմ է անուանում սահմանադրականներին։ Այդ կրօնական հանդէսին մասնակցել է նաև գնդապետ Լեախօվը։ Հանդէսի վերջում շահը նուիրել է նրան իր պատկերը։ («Рѣчь»)

—

Շահի հօրեղբայր Զիլլի-Սուլթանը դառնութեամբ գանգատվում է, որ անգլիացիները ոչ միայն արգելք չը հանդիսացան նրա աքսորվելուն, այլ և նպաստեցին։ Զիլլի-Սուլթանը, որին անգլիական կառավարութիւնը դեռ մօտիկ ժամանակներս հնդկական աստղի նշանը շնորհեց, յոյս ունէր համակրութիւն և աջակցութիւն գտնել բրիտանական դեսպանութեան կողմից։ («Բ.»)

—

Թէհրանից „Рѣчь“ լրագրին հեռագրում են օգոստոսի 5-ին։

Սպահանից հաղորդում են, որ ժողովուրդը գրգռված յայտնի սահմանադրական Հաջիի կալանաւորութիւնից ու աքսորումից, ահագին բազմութեամբ հաւաքվեց և զինված մարդկանց մի խումբ ուղարկվեց, որոնք ճանապարհին հասնելով սահմանադրականին, խլեցին վերջիններիս ձեռքից Հաջիին և յետ բերին։ Ժողովուրդը նրան ձեռքերի վրա ներս բերեց քաղաք։

—

Թէհրանից օգոստոսի 4-ին հեռագրում են «Рѣчь» լրագրին, որ ռէակցիօն մուջտէհիդ շէյխ Փէյզուլլան, ջումա մզկիթը հաւաքելով մօտ 3000 խուլիգաններ, փող է բաժանել նրանց և գրգռող ճառ արտասանել սահմանադրութեան դէմ, որը իբրև թէ ոչնչացնում է կրօնը։ Կառավարութեան գործակալներն էլ ագիտացիա են մղում ընտրութիւնների յայտարարման օրը ընդհանուր գործադուլ անելու համար։

—

«Р. С.» լրագրին հեռագրում են Թէհրանից, որ այնտեղ ռէակցիան գործում է մեծ եռանդով։ Մի կողմից շէյխ Փէյզուլլայի և շէյխ Մօհամեդի ջարդարար ագիտացիան, միւս կողմից՝ իշխանաւորների կոչերը—պաշտպանելու իսլամի կրօնը «սատանայի որոգայթներից»՝ սահմանադրութիւնից—մեծ իրարանցում է առաջ բերել խաղաղ ազգաբնակութեան մէջ։ Բազմաթիւ անընդհատ զօրաշարժումներ են տեղի ունենում գիշերները։ Ջարդերի սպառնալիք է տիրում։ Քերբալայի գլխաւոր մուջտէհիդ Ախունդ-Մօլլա-Քեազիմ Խօրասանին, որ սահմանադրութեան կողմնակից է, ուղևորվում է Կ. Պոլիս խնդրելու Թիւրքաց «սահմանադրական սուլթանին» պաշտպան հանդիսանալու Պարսկաստանին։

—

(Սեփակ. Թղթակց.)

Թաւրիզ, 2 օգոստոսի

Դրութիւնը անփոփոխ է։ Կռիւ չը կայ։ Կառավարչապետի ուղարկած պատգամաւորները բանակցութեան մէջ են սահմանադրականների հետ։ Ասում են՝ վաղը միւս օրը թէ կառավարչապետը և թէ սուփահդարը (զօրքի հրամանատար) քաղաք պիտի մանեն։

—

Եթէ տրամադրութեան նայելու լինենք, դժուար է հաշտութիւն գուշակել։ Սահմանադրականները պահանջ են դրել «անջումանը» վերականգնել, մուջտէհիդներին, Ռահիմ խանին և Սուջայի Նիզամին իրանց ձիաւորներով հեռացնել, որպէսզի հնարաւոր լինի հաշտութիւն կայացնել։

Այսօր տպագրված մի կոչով սահմանադրականները մերկացնում են բարձր հոգևորականութեան այլանդակ պատկերը իր բոլոր մանրամասնութիւններով և որպէս փաստեր իրանց ասածների ճշմարտութեան՝ ցրում են ժողովրդի մէջ Իմամ Ջումայի, Հաջի Միրզա Հասան աղայի և Սուջայի Նիզամի Թէհրան տուած հեռագիրների պատճէնները, որ ձեռք են բերել հեռագրատունը գրաւելուց յետոյ։

Հաջի Միրզա Հասան աղան (մեծ մուջտէհիդ) մեծ վէզիրին և պատերազմական մինիստրին յիշեցնում է, որ շահի կողմից խոստացված մէկ քիւրիւր դրամը, ապստամբութիւնը ճնշելու համար, չը ստացվեց, յորդորում է թէ դրամ և թէ արքայական շնորհներ ուղարկել կռւողների համար, որովհետև կռւողները անհաց են մնացել և հրացանները առանց փամփուշտի, այնպէս թէ տէրութիւն և թէ շարիաթ (օրէնք) ձեռքից կը գնան։ Ներկայ հանգամանքներում խիստ դժուար են թւում թէ հաշտութիւնը և թէ ապստամբութեան ճնշումը։ Կառավարութիւնը ույժ չունի, ույժ ունենալու դէպքում էլ մեծ արիւնհեղութիւն է նախատեսվում, որովհետև սահմանադրականների կռիւը խիստ կատաղի կը լինի։ Մենք բազմիցս կրկնել ենք, որ հաւատքը դէպի միապետութիւնը այնպէս է խախտվել, որ նոյնիսկ եթէ անկեղծ առաջադրութիւններ էլ լինեն, հաւատացողներ չեն լինի։ Շատ դժուար է ֆանատիկ ժողովրդին յեղաշրջել և իր իսկական թշնամիներին ծանօթացնել, բայց երբ այդ հնարաւոր է լինում և կուրացած աչքերը տեսնում են դարաւոր պատուարված այլանդակութիւնը իր ամբողջ մերկութեամբ, այդ դէպքում այդ թշնամիները համարվում են ոչ իսլամներ, քաֆիրներ, որոնց փչացնելը, ոչնչացնելը ըստ Ղուրանի ամեն մի իսլամի պարտականութիւնն է։ Այդ յեղաշրջման շնորհիւ է, որ այսօր տեղիս երկու մեծ մուջտէհիդների և սահմանադրականների միջև այնպիսի անջրպետ վիհ է գոյացել, որին լցնելը, մէջ տեղից վերցնելը անկարելիութիւն է համարվում։

Սաթթար խանը Էյն-ուդ-Դօվլէի (կառավարչապետ) մարդկանց ասել է. «Մի ամիս է, որ Էյն-ուդ-Դօվլէն Ատրպատականի կառավարչապետ է նշանակվել. նա լաւ գիտէ թէ ովքեր են արիւնհեղութիւնների պատճառները, մարդասպանները, կողոպտողները, բռնաբարողները, այսու հանդերձ ոչ ոքի պատժված չենք տեսնում. այլ ես ինչպէս մենք զէնքներս ցած դնենք և հաւատանք ձեր հաւաստիացումներին»։ Ասում են նոյն իսկ, որ աւելացրել է, թէ եթէ հաշտութիւն էլ լինի, պետական զինանոցը մի քանի տարի սահմանադրականների (յեղափոխականների) ձեռքում պիտի մնայ մինչև կատարեալ հաւատքի և սահմանադրութեան վերականգնում։ Այսպիսի պայմաններում դժուար թէ հաշտութիւն և խաղաղութիւն վերականգնել հնարաւոր լինի։

3 օգոստոսի

Գիշերս ժամը 9-ից հրացանաձգութիւն սկսվեց և շարունակվեց մինչև ժամը 1-ը։ Կառավարականները փորձելիս են եղել գիւղեր գրաւել։ Կռւի ընթացքում սահմանադրականների կողմից սպանվեց մէկը, իսկ կառավարականներից յայտնի չէ քանիսը։ Այսօր կռիւ չը կայ։ Սուփահդարը գտնվում է քաղաքի մօտիկ Զանգուր գիւղում, որպէս դի կառավարչապետի հետ միասին քաղաք մանի։ Կառավարչապետի ճիշտ տեղը իմանալ կարելի չէ լինում. յաճախ այն գիւղս Թաւրիզին մօտ է։ Այսօր Հաջի Մէհտին և Իջլալ ուլ-մուլքը—անջումանի անդամներ—եկան մզկիթ։ Հասարակութիւնը ցնծութեամբ ընդունեց։ Դրութիւնը օրըստօրէ լրջանում և կարծես աւելի սպառնալից է դառնում, որովհետև սահմանադրականները ոչ մի զիջում անելու կողմնակից չեն և չեն մտածում տեղի տալ։ Յայտնի հետոր Միրզա Հուսէյնը կրկին հրապարակ է եկել և իր հրաշունչ քարոզներով ոգևորում է ժողովրդին։

4 օգոստոսի

Այսօր վաղ առաւօտեան սկսվեց հրացանաձգութիւն։ Յայտնի լօթի Ղալէլայի Մամմատը վերջերս խանգարում էր սահմանադրականների գործունէութիւնը, երբեմն վերջիններիս զինուորներից հրացանները խլելով։ Քանիցս եղած զգուշացումները անհետևանք էին մնում։ Գիշերս մի ֆէդայու ծեծելու և հրացանը խլելու պատճառով սկսվեց յարձակումը։ Ֆէդայիները շրջապատեցին ամեն կողմերից և մի քանի ժամվայ դիմադրութիւնից յետոյ փախցրին Մամմատին և ամբողջ տունը կրակեցին, առանց մի շիւղի ձեռք տալու։ Այսօր ժողովրդի մէջ կրկին ցրված է մուջտէհիդների և Սուջայի Նիզամի տուած հեռագիրների պատճէնները, որոնք հաստատում են, որ Թաւրիզի չարիքների մեծ պատճառները յիշեալ հոգևորականները, Ռահիմ խանը և Սուջայի Նիզամն են։

Օրվայ դրութիւնը անորոշ է։ Հրացանաձգութիւնը դադարել է։ Չէ իմացվում՝ կառավարչապետը և սուփահդարը ե՞րբ պիտի քաղաք մանեն կամ արդեօք կը մանե՞ն։ Լուրերը հակասական են. ոմանք ասում են, որ մեծ պատրաստութիւն և մեծ զինուորական ույժ ունի կառավարչապետը իր հետ, ոմանք բոլորովին հակառակն են պնդում։

Շրջակայքի ասպատակութիւնների անչափութեան մասին շատ եմ գրել։ Անցեալ օրը եղբարք Թումանեանների տեղիս գրասենեակը Բագուից հեռագիր ստացաւ, որ յիշեալ տան Ղարադաղում ունեցած բոլոր գիւղերը գրաւված են շրջակայքի խաներից. կարգադրում են միջոցներ ձեռք առնել։ Գր. կառավարիչը դիմեց առաջնորդի խորհուրդներին և աջակցութեան։

Եթէ հայերը իրանց չէզոքութեամբ հանդերձ մինչև վերջ կարողանան անփորձ մնալ, պիտի գոհ լինել. անկեղծ յորձանուտ ալիքները ամեն վայրկեան կարող են իրանց ամենակուլ երախը բանալ, որից ազատվելը շատ դժուար կը լինի։

Մուրացողների թիւը օրըստօրէ մեծանում է։

4 օգոստոսի, երեկոյեան

Պարզվեց, որ առաւօտեան սպանված են թէ Նայիբ Մամմատը և իր եղբայր Նայիբ Ալին։ Ահրաբի թաղի բնակչութիւնը շնորհակալ է լինում յեղափոխականներին, որ ազատեցին ամբողջ այդ թաղը յիշեալ լօթիներից։ Նայիբ Ալու սխրագործութիւնների վերաբերմամբ անցեալ տարվայ նամակներով գրած եմ։ Այդ լօթին հայերին էլ չէր խնայում. հէնց այս քանի օրս զրպարտելով մի հայ տղայի՝ բաւական դրամ կորզեց։

Ամբոխը աւերեց յիշեալների թէ տունը և թէ մի այգին, որը բռնի կերպով իւրացրել էին Թիւրքերի գերեզմանատնից. որոշվեց պատերը վերցնել և կրկին միացնել գերեզմանատանը։

Իր տան մէջ ունեցած բանտից հանել են մի քանի մարդ և կին բանտարկեալներ։

Բրօ

ԴԷՊԻ ՀԱՅՐԵՆԻՔ

Արդէն մի քանի շաբաթներ են անցել այն երջանիկ վայրկեանից, երբ թերթեր ու հեռագիրներ աւետեցին մեզ օսմանեան սահմանադրութեան մասին։ Սկզբում մենք պարտաւորված էինք թերահաւատութեամբ վերաբերվել այդ լուրին, այն ինչ դեռ հեռագիրներ շարունակում են տալ լրացուցիչ տեղեկութիւններ այդ մասին։

Ինչպէս, մի թէ վերջապէս լուծվեց այն հսկայ գորդեան հանգոյցը, որ այնքան տարի դամոկլեան սրի պէս շարունակում էր այնպէս սպառնալից կերպով կախված մնալ Եւրոպայի գլխին։

Մի՞թէ երէկվայ կարմիր արեան սուլթանը այսօր վերջապէս վճռել է իր կողքը նստելու հրաւիրել այն գեաւուրին, որին այնչափ տարի անխղճաբար կերաւ։

Մի՞թէ այժմ մեզ՝ հայրենիքի խորթ զաւակներիս թոյլատրվում է վերադառնալ մեր քաղցր հայրենիք։ Ո՜հ, դուք երջանիկ վայրկեաններ, երազ չը դառնաք, խնդրում եմ։

Այո, մեզ հայերիս համար խիստ դժուար է հաւատք ընծայել սուլթանի շնորհքներին, այն սուլթանի, որ այնքան օջախներ հիմնայատակ կործանեց, այնչափ արիւններ մարեց։ Անցեալի տխուր փաստերն ու մեր յիշողութիւնները մեզ կարծես յուսահատ լինել միայն սովորեցրին Չընգիզխանների, Լէնգթիմուրների այդ հարազատ թոռան «բարի ձգտումների» վերաբերմամբ։ Ասացէք, խնդրեմ, ինչպէս հաւատայ հայը 94 եր, 96 եր սարքող սուլթանի, 300,000 անմեղների արեան մէջ լողանալուց չը կշտացող դահճապետի շնորհքներին։

Բայց չէ, այդչափ էլ չը պիտի բացասաբար վերաբերվել, որովհետև այն հանգամանքները, որոնց մէջ գործում էր սուլթանը անցեալում, այժմ բոլորովին փոխվել են։ Եթէ այն ժամանակ նա կռթնած զինուորական ույժին՝ առաջ էր տանում իր ծրագիրները, այժմ արդէն փաստ է, որ նոյն այդ ույժն է, որ հակառակ է գնում իրան։ Եթէ այն ժամանակ Թիւրք տարրը եթէ չասենք հաճութեամբ, այլ անտարբերութեամբ էր վերաբերվում դէպի հայկական կամ մակեդոնական կոտորածները, այժմ արդէն նոյն տարրը ոչ ի հարկէ ամբողջութիւնը, այլ գէթ մի ստուար մասը դէմ է այդ բանին։ Եթէ վերջապէս հայը այն ժամանակ մենակ էր իր պահանջների մէջ, այժմ արդէն նոյնատեսակ պահանջներին արձագանք են տալիս արաբները, ալբանացիները, մակեդոնացիները, ինքը Թիւրք ժողովուրդը ու Թիւրքական բանակը։ Այդ մի կողմից, միւս կողմից երիտասարդ Թիւրքերի քրիստոնեաներին ցոյց տուած վերաբերմունքը բաւականաչափ գրաւականներ են վստահութիւն տածելու ապագայի վերաբերմամբ։

Հետևաբար մենք, Թիւրքահայ պանդուխտներս, ամենայն վստահութեամբ դէպի մեր կիսաքանդ հայրենիք կարող ենք դիմել։ Օտար երկիրներ թափառելով մեր ոտները մաշեցին. օտար դռներ—պատերի տակ մեր կեանքը փչացրինք։

Դէպի հայրենիք, հայ արհեստաւոր, երկրագործ ժողովուրդ. ժանգոտած գործիքներ, արօր-գութաններ քեզ են սպասում։ Դէպի հայրենիք, հայ խաշնարած խեղճուկ, քո երկիր հսկայ լեռները, կանաչազարդ լայն կրծքերը բաց արած քո հօտերին են սպասում։ Շա՜տ, շա՜տ վաղուց է, ինչ քո սրինգի ձայնը չէ լսվում, քո լէ-լէները սարեր չեն թնդացնում... Եւ դու, հայ երիտասարդ, դէպի քո վաթան, դէպի կիսակործան հայրենի օջախը, այնտեղ—այդ օջախի գլխին քո նշանածը մենակ բուի պէս պպզած՝ արտասուաթոր աչքերով քո ճամբին է սպասում...։

Դէպի հայրենիք...։

Աշոտ Բալասի

Թաւրիզ, 3 օգոստոսի

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՓՈՔՐ ԱՍԻԱՅԻ ԹԻՒՐՔԵՐԸ

Այս վերնագրի տակ «Бирж. Вѣд.» թերթի թղթակից բժիշկ Ն. Ստրօգինը Զմիւռնիայից իր մի թղթակցութեամբ շատ հետաքրքրական տեղեկութիւններ է տալիս այն մասին, թէ ինչպէս և ինչ ձևով են կազմակերպվել ազատագրական շարժումները Փոքր Ասիայի Թիւրքերի մէջ և թէ սրանք ինչպիսի դեր են կատարել այդ շարժումներում։

Մենք տալիս ենք այդ թղթակցութեան թարգմանութիւնը մի քանի կրճատումներով։

«Սալոնիկից ես հեռացայ,—ասում է բժ. Ստրօգինը,—երկու ամիս առաջ և ինձ հետ այն համոզումը դուրս տարայ, որ երիտասարդ-Թիւրքերի շարժումը իրապէս ղեկավարում է Սալոնիկի կոմիտէտը։ Այդ կոմիտէտի գոյութեան մասին Թիւրք կառավարութիւնը գիտէր, ի հարկէ, շատ վաղուց և շատ անգամներ էր վարձատրութիւն նշանակել նրա գլխաւորների գլուխը բերողների համար։ Իսկ այդ գլխաւորները հէնց այդտեղ, ձեռքի տակ էին, բանակի շարքերում, բայց Իլդըզ փաշայի ագենտները նրանց փնտռում էին ամբողջ երկրում, անմեղ մարդկանց էին ձերբակալում։

Զմիւռնիա գալով և փոքր ինչ ծանօթանալով կեանքին, հասկացայ, որ այստեղ էլ ամեն ինչ կատարվում է Սալոնիկի կոմիտէտի ցուցմունքներով։

Հասաւ յունիս ամիսը, և այդ ժամանակ օֆիցերները, որոնց հետ ես ծանօթութիւններ ունէի, սկսեցին, թէև շատ զգուշաւորութեամբ և, ի հարկէ, մտերմական շրջաններում, ինչ-որ պատրաստվող խոշոր դէպքերի մասին խօսել։ Այդ խօսակցութիւնները աւելի ևս սաստկացան, երբ բազմաթիւ զօրքեր սկսեցին գալ Զմիւռնիա, որոնց կառավարութիւնը քաշում բերում էր փոքր-ասիական վիլայէթներից։

Նախ եկան նիզամները (իսկական ծառայութեան մէջ եղող զօրքը), իսկ յետոյ պահեստի զօրքեր Կասաբայից, Այդընից և այլ քաղաքներից։ Սկզբում չէր հասկացվում, թէ ինչու համար էին զօրքերը Զմիւռնիա բերվում, բայց մօտաւորապէս յունիսի 10-ին պարզվեց, որ նաւեր են վարձված, որպէս զի զօրքերին Սալոնիկ տանեն։ Այդ ժամանակ հասկացվեց, որ Թիւրք կառավարութիւնը պատրաստվում է ճնշել զինուորական բունտը։ Գործին անտեղեակ մասնաւորները խօսում էին, թէ պատրաստութիւնները Բուլղարիայի հետ պատերազմելու համար են։

Հետզհետէ, քանի նաւերը հեռանում էին զօրքերով, այնչափ աւելի ու աւելի էր պարզվում գործին անտեղեակ անձնաւորութիւնների խօսակցութիւնից, որ Զմիւռնիայի բանակի համարեա թէ բոլոր օֆիցերները հրահանգներ ունեն Սալոնիկի կոմիտէտից և որ բոլոր փոքր ասիական գարնիզոններում այդ կոմիտէտը ճիւղեր ունի։ Վերջը, երբ «ազատութեան օրերը» հասան, իմացայ, որ դեռ 1905 թւականին Զմիւռնիայում կազմվել էր «Միութիւն և առաջադիմութիւն» յեղափոխական ընկերութեան փոքր ասիական կոմիտէտը, որի մէջ մտել էին հինգ օֆիցերներ։ Նոյնպէս պարզվեց, որ երիտասարդ Թիւրքերը փոքր-ասիական գարնիզոններում իրանց ունեցած աջողութիւններով պարտական են բժիշկ Նազըմ բէյին, Թիւրքական շարժման այդ հերոսին, որը ամբողջ ամիսներ աշխատել էր Փոքր-Ասիայի պանդան կողմերում, միանգամայն հաւատացած լինելով որ միահեծանութեան օրերը համարված են և որ սուլթանը, անշուշտ, իր վերջին յոյսը պիտի դնի փոքր-ասիական զօրքերի վրա։

Միահեծանութեան կողմնակիցները չը գիտէին, որ Զմիւռնիան էլ, Սալոնիկի նման, վաղուց արդէն յեղափոխութեան յենարանն էր դարձել։

Սահմանադրութիւնը յայտարարելու մասին լուրը Զմիւռնիա հասաւ յուլիսի 12-ի առաւօտը։ Նրան տպագրեցին հազարաւոր օրինակներով, և իսկոյն տարածվեց հակառակ նահանգապետ Ֆայիկ բէյի ջանքերի, որը ուղղակի քարացել էր։ Նրան ձեռքի բերեց զինուորական կոմիտէտը, որը իսկոյն իր ձեռքը առաւ գործերի ղեկավարութիւնը։

Հարկաւոր էր ժողովրդի մէջ ոգևորութիւն առաջացնել, հարկաւոր էր հանգստացնել քրիստոնեաներին ու օտարականներին, որոնք արդէն սովորել էին տեղական կեանքի մէջ ամեն մի բարդութիւն նկատել իբրև նախարան կոտորածների և կողոպուտների։ Այդ դերը շատ ջերմեռանդ կատարեցին. երիտասարդ-Թիւրքերի կոմիտէտի ագենտները շրջում էին տնից տուն, խանութից խանութ, ամեն տեղ հաւատացնելով որ ոչ մի կասկած չէ լինելու, որ իզուր է պահվելը կամ քաղաքից փախչելը և որ զօրքերը հաւատարիմ կը մնան ազատութեան գործին։

Տներից տուն այդպէս շրջելը տևեց յուլիսի 12-ին և 13-ին։ Իսկ 14 ին Սալոնիկի կոմիտէտից մի տպագրված պաշտօնագիր ուղարկվեց, որ խնդրել էին անմիջապէս ամբողջ քաղաքի պատերին փակցնել։ Միևնոյն ժամանակ Սալոնիկից և հրահանգ էր ուղարկված, որի մէջ ի միջի այլոց ասված էր.

«Բարեհաճեցէք ամեն կերպ աշխատել, որ հրապարակների վրա ժողովրդային մասսաները ցոյցեր անեն ի պատիւ ազատութեան։ Նախազգուշական միջոցներ ձեռք առնելու ոչ մի կարիք չը կայ։ Մարշալներն ու զինուորական ինսպեկտորները ամեն տեղ արդէն ցոյցեր են անում հին ռէժիմի դէմ։ Կ. Պօլսից և բոլոր վիլայէթներից մենք բազմաթիւ հեռագիրներ ենք ստանում միևնոյն բովանդակութեամբ. «Պաշտպանեցէք օտարազգիների անձեռնմխելիութիւնը»։ Աշխատեցէք քրիստոնեաների համակրանքը գրաւել»։

Այդպիսի հրահանգ և այդ տարիճան ուրախալի լուրեր ստանալուց յետոյ, Զմիւռնիայի կոմիտէտը այլ ևս հասկացաւ, թէ ինչ է հարկաւոր իրան անելու։ Ամենից առաջ նա ձերբակալեց գարնիզոնի նաչալնիկին՝ դիվիզիայի գեներալ Թէվֆիկ փաշային։ Այդ գեներալը, ինչպէս բոլորն էլ վաղուց գիտէին, շատ աւելի Կ. Պօլիս դաւոսներ ուղարկելով էր զբաղված, քան գարնիզոնի գործերով։ Նրա արժանաւոր պաշտօնակիցն էր մայոր Մեսուտ բէյը, որի վրա կոմիտէտը խիստ հսկողութիւն նշանակեց։

Հետաքրքրականն այն է, որ, չը նայելով Թէվֆիկին ձերբակալելուն, և հակառակ բազմաթիւ պրոկլամացիաների, Զմիւռնիայի ժողովուրդը մեծ անվստահութեամբ վերաբերվեց բոլոր կատարված դէպքերին։ Նա, կարծես թէ, քարացաւ ու չէր հասկանում, թէ ինչ է իսկապէս կատարվում, որտեղից են գալիս այս հրաշքները։ Միմիայն վեցերորդ օրը, երբ հրապարակների վրա ու փողոցներում առաւօտից մինչև իրիկուն օֆիցերներն ու զինուորները դրօշակներով ու մուզիկայով շարունակ ցոյցեր էին կատարում, այդ ժամանակ միայն ժողովրդի ոգևորութիւնը ընդարձակ ասպարէզ գտաւ։ Կասկածի վերջին նշոյլները փարատված էին։ Քաղաքը կարծես թէ կերպարանափոխվեց, ամբողջովին զարդարվեց դրօշակներով և սկսվեց փառահեղ թափօրների շրջանը, որին կարելի էր կարծել, թէ վերջ չէ լինելու։

Պէտք է ասեմ և այն, որ այստեղ հրատարակվող թերթերը ֆրանսերէն և յունարէն լեզուներով—ընդամենը 10—յանկարծակի եկան մամուլի ազատութեամբ։ Առաջներում այնպէս հեշտ էր լրագիր հրատարակելը. դրա համար բաւական էր միայն Կ. Պօլսից եկած կառավարչական թերթերից կտրել այն բոլորը, ինչ որ ընդգծում էին այստեղի գրաքննիչները, և լրագիրը պատրաստ էր։ Իսկ հիմա հարկաւոր է յօդուածներ գրել, պրոկլամացիաները կոմենտարիաների ենթարկել. Իսկ դա շատ աւելի դժուար է, ի հարկէ։ Նամանաւանդ դժուար է հրաժարվել այն «ձևից», որով ընդհանրապէս գրում էին այն ժամանակներից ի վեր, երբ սկսել են Թիւրքիայում թերթ հրատարակել։ Զմիւռնիայում նոյն երևոյթն է կրկնվում, ինչ ամեն տեղ. ցենզուրան ոչնչացնելը, ի հարկէ, դեռ չէ նշանակում մամուլը ազատ դարձնել։ Բայց ամենագլխաւորը արդէն արված է։ Զմիւռնիայում էլ այլ ևս ցենզուրա չը կայ»։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՈԼԵՐԱ

❖ Զուբալովի ժողովրդական տանը շարունակվում է հակախոլերային սրսկումներ կատարելը ցանկացողների վրա։ Մինչև օրս նախազգուշական սրսկումներ կատարել են 25 հոգու մարմնի վրա։

❖ Հակախոլերային սրսկումների վրա հսկելու համար Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը հրաւիրել է ժամանակաւորապէս բժ. Ա. Մուխարինսկուն։

❖ Թիֆլիսի քաղաքային սանիտարական բժշկական մարմնի կարգադրութեամբ ուժեղացված է հսկողութիւնը շուկայում ծախվող մթերքների վրա։ Խակ պտուղները և միրգը քաղաքային վարչութեան գործակալները ոչնչացնում են։

❖ Որովհետև Թիֆլիսում արդէն խոլերա կայ, քաղաքային վարչութիւնը որոշել է անասունների մորթելը կատարել քաղաքային սպանդանոցում և կիրակի օրերը, որպէսզի քաղաքի ազգաբնակութիւնը ամեն ժամանակ թարմ միս ունենայ։

❖ Քաղաքային վարչութիւնը կարգադրել է քաղաքային վեց հիւանդանոցներում և առևտրա-տնտեսական ոստիկանութեան գրասենեակներից մի քանիսում պահել հարկաւոր քանակութեամբ չայրված կիր՝ ձրիաբար աղքատ ազգաբնակութեանը տալու համար։

❖ Քաղաքային վարչութեան գործակալներին պատուիրված է շրջել բոլոր հին հագուստավաճառների խանութները և արձանագրութիւններ կազմել նրանց վերաբերութեամբ, ում կը գտնվեն հին շորեր առանց ախտահանիչ կամերայի պլոմբի։

❖ Քաղաքային վարչութիւնը կարգադրել է բանալ Նուր գետի ջրանցքը, որպէսզի մեծ ճնշումից ջուրը առատութեամբ թափվի փոքր ճիւղը և տանէ այդտեղ կուտակված կեղտոտութիւնները։

❖ Խոլերայից հիւանդացաւ օգոստ. 9-ին բժ. Վարդանեանի այգեպան Լավրենտի Զարչիշվիլին, որ ներկայումս պառկած է հիւանդանոցում։ Կատարվում է բակտերիոլոգիական մանրազննին քննութիւն։

❖ Երէկ, Թիֆլիսում, 6 րդ քաղաքամասում, Ախունդովի տանը, № 55—խոլերայով հիւանդացաւ և մեռաւ Մաշադի-Ազա-Իւսուֆ Քերիմովը։

❖ Երէկ, օգոստոսի 11-ին, Թիֆլիսի հրացանաձիգ բատալիօնի եֆրէյտոր Պետէվարդուլօն հիւանդացաւ խոլերայով։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

(Սեփակ. թղթ.)

Գանձակ, 9 օգոստոսի

Ուսումնական տարին սկսվում է, իսկ մեր դժբաղդ դպրոցի հոգաբարձութիւնը, որին մեծ յոյսերով ընտրեց ժողովուրդը, այսօր՝ երեսի վրա թողնելով կրթական գործը, հանգստութիւն վայելելու տենչով հրաժարական է տալիս։

Հոգաբարձու Ն. Բաբաքեխեանի հրաժարվելուց յետոյ, հաւատարի աղբիւրներից տեղեկանում ենք, որ նրա նորընտիր երկու ընկերները վճռել են նոյնպէս հրաժարական տալ։ Եթէ եկեղեցու սպասաւորների գործելը, որ արդարացի պահանջի արդիւնք էր, յուսահատութեան դուռն է հասցրել մեր հոգաբարձութիւնը, ապա եթէ՝ նրանց առաջ, հասարակական սեղանի վրա, դրված լինէր ընդհանուրի շահը շօշափող մի աւելի լուրջ խնդիր, որի լուծման համար կը պահանջվէր աւելի մեծ ջանք, տակտիկա և անշահ վարմունք, ինչ կը լինէր նրանց կացութիւնը, արդեօք քաղաքը չէին թողնի ու փախչի։

Հարիւրաւոր ծնողներ, իրանց ուսումնածարաւ երեխաների հետ, սրտատրոփ սպասում են դպրոցների բացմանը։ Դեռ ուսուցչական կազմը չէ հրաւիրված, մինչև անգամ պակասում են լրացուցիչ նստարաններ և դպրոցական այլ անհրաժեշտ կահկարասիք։

Ասենք թէ՝ հոգաբարձուները դեռ ոչինչ չարած հրաժարական են տալիս. ապա ինչ է սպասում Գանձակի բանիմաց սերունդը, որ լուռ հանդիսատես է թայֆայականութիւնից առաջացած խառնակութիւններին, փոխանակ մի կտրական քայլի դիմելու։ Ինչու չը միջամտել ընդմիշտ հեռացնելու ասպարէզից նրանց, որոնք սև գիծ քաշելով ամեն մի հասարակական բարիք կրող գործի վրա՝ առաջ ևս տանում, առանց արգելքի, իրանց «ես»-ի իշխանութիւնը։ Ժամանակ չէ՞ արդեօք խօսքը փոխել գործի. Ժամանակ չէ՞ որ հասարակական սեղանին մասնակցելուց հեռացվեն նրանք, որոնք միմիայն իրանց անձնական շահին են ծառայում։

Գալով հրաժարվող հոգաբարձուներին, կասենք՝ ջուր են թողնում դպրոցը և հարիւրաւոր սովորող երեխաների բաղդը, ապագայ ընտրվելիք հոգաբարձութեան. դա արդէն ուշ կը լինի, ուշ այնքան, որ այս տարի դպրոց չենք ունենայ։ Գոնէ այնքան բարի գտնվէին, որ ուսուցչական կազմը ընտրելու գործին վերջ տային, ապա հրաժարվէին, որով մեր հարիւրաւոր երեխաներ ազատ կը լինէին փողոց շպրտվելուց։

Սարգօ

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

(Սեփակ. թղթ.)

Նոր Բայազէտ, 5 օգոստոսի

Անցեալ յուլիսի 25-ին, ծխական դպրոցի դահլիճում, մի խումբ ամառանոց եկող երիտասարդներ, տեղական սիրող Ռ. Ազատեանի ղեկավարութեամբ, խաղացին Սեւեռեանի «Մարվող ճրագներ» պիէսը, յօգուտ նոյն դպրոցի գրադարանի։

Նախ քան մի քանի խօսք ասելը ներկայացման մասին, աւելորդ չեմ համարում յայտնել, որ ներկայացումներ առհասարակ Նոր-Բայազէտում շատ քիչ են տեղի ունենում, շնորհիւ տեղական սիրողների ծուլութեան և կանանց դերի պակասութեան։ Սկիզբներում նոր-բայազէտցին չը գիտէր ներկայացումներ յաճախել, որով ստիպում էր մեծ դժուարութիւններով տոմսակ վաճառել, իսկ այժմ, երբ նոյն ժողովուրդը սիրով լցնում է ներկայացումների կամ երեկոյթների դահլիճները, ինչպէս ցոյց տուեց վերջին ներկայացումները, ամօթ չէ՞, արդեօք, սիրողների կողմից՝ անգործութեան մատնել բեմը և սառեցնել նոր-բայազէտցու սրտում դէպի ներկայացումը ծագած նորածիլ սէրը...

Թող այդ մասին մտածեն իրանք՝ սիրողները։

Գալով խաղին, պէտք է ասած, որ թոյլ էր, շնորհիւ նոր թատերասէրների անփորձութեան և, նրանց ույժերի հետ համեմատելով, պիէսի դժուարութեան։ Շատ թէ քիչ աչքի էին ընկնում օր. Բաբասեան (Աննա), օր. Մելիք-Սարգսեան (Մարթա) և պ. Աթանասեան (Սերոբ)։ Ներկայացումը կարելի էր հանդուրժելի համարել։

Ամսիս 3 ին «Խաչեր» կոչված զբօսավայրում մի քանի սիրողների նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ զբօսանք յօգուտ ծխական դպրոցների։ Կար և վիճակախաղ։

Ազեգ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

❖ Ինժեներ Վուրգելը Պետերբուրգից մի մասնաւոր հեռագիր է ուղարկել, որից երևում է, որ կովկասեան լեռնաշղթայով երկաթուղագիծ անցկացնելու հարցը լուծվել է դրական մտքով։

❖ Ժողովրդական զուարճութիւնների ընկերութիւնը վճռել է միանալ Լ. Ն. Տօլստօյի յոբելեանի տօնին։ Վերայի ժողովրդական աուդիտօրիայում, արքունական թատրոնում և Վարշաւեան թատրոնում կը ներկայացվեն «Խաւարի իշխանութիւնը» և «Լուսաւորութեան պտուղները» պիէսներից մի-մի տեսարան։

❖ Հաստատ աղբիւրից մեզ տեղեկացնում են, որ Բագուի հայոց կուլտուրական միութեան մելիօրատիվ սեկցիան պարտաւորեցրել է թէ իր ագենտներին, որոնք գնաւ են ուղարկված գիւղական մանր վարկի հաստատութիւններ կազմակերպելու համար, և թէ այն ուսուցիչներին և կամնակի անձանց, որոնք սովորել և աւարտել են նոյն սեկցիայի հաշւով Թիֆլիսում կազմակերպված բանկերի հաշւապահական կուրսերը, որ նրանք ձրիաբար բացատրեն գիւղական և արհեստաւոր համայնքներին մանր վարկի բանկերի նշանակութիւնը և օգնեն նրանց այդպիսի բանկեր հիմնելու համար համախօսականներ, ցուցակներ և խնդիրներ կազմել։

❖ Լսում ենք, որ մեր ծերունի մանկավարժ Ղ. Աղայեանը մի թիւրքահայ մանկավարժի օգնութեամբ սկսել է իր «Մայրենի լեզու» դասագրքերը թիւրքահայ բարբառի վերածել, Թիւրքիայի հայկական դպրոցներում ևս ընդունելութիւն գտնելու համար։

❖ Թիֆլիսի ժամ.-գեն. նահանգապետի կարգադրութեամբ Թիֆլիսի տանտէրեր՝ Աբաս-Աբադսկի հրապարակում—Իվան Մչեդլով, Իզմայլովսկի փողոցում—Անդրէյ Խելլայեվ և Թիֆլիսաբնակ աւարի Իսահակ Բաղալով և Միքայէլ Չիչինաձէ, պարտադիր որոշումները խախտելու համար, ենթարկվում են 10-ական րուբլի տուգանքի։ Շելկօվնիկովսկի փող. տանտէր Աննա Թամամշեվան գոմաղբանների պարտադիր կանոնները խախտելու համար ենթարկվում է 30 րուբլի տուգանքի կամ 2 շաբաթով բանտարկութեան։ Թիւրքահպատակներ Րաֆայէլ Բահիմ-օղլի, զէնքի կանոնը խախտելու համար, ենթարկվում է 500 րուբլի տուգանքի կամ 2 ամսով բանտարկութեան։ Սղնախի գաւառի բնակիչ Գէօրգիյ Զըխաշվիլի՝ իբրև վտանգաւոր անձն, աքսորվում է Թիֆլիսի ժամ. գեներալ-նահանգապետութեան սահմաններից։

❖ Բաթումից մեզ գրում են. «Սկսվել է անձրևների շրջանը։ 3 օր է փառաւոր անձրևներ են տեղում. օդը բաւական հովացած է»։

❖ Ստացանք «Ընդհանուր աշխարհագրութեան դասագիրք», երկրորդ մաս. 5-րդ տարվայ դասընթաց, ըստ Իվանովի և Կրուբերի. փոխադրեց Աբեղեան, գ. 65 կ.։

❖ Թիֆլիսի առաջին քաղաք. ապաստարանում գիշերել են յուլիս ամսվայ ընթացքում 120 հոգի 1891 անգամ։ Դրանցից ռուսներ եղել են 45 հոգի, հայեր 48 հոգի, վրացիներ 18 հ., գերմանացիներ 2 հ., լեհեր 2 հ., լատիշներ 1 հ., լիտօվցիներ 1 հ., հրէաներ՝ 1 հ. և այլ ազգութիւններից 2 հ.։

❖ Պարսից գեներալ-հիւպատոս Մօմտազ-խան-Սալթանէն արձակուրդով մեկնել է Վլադիկավկազ։ Նրա բացակայութեան ժամանակ նրա պարտականութիւնները կը կատարէ Արմօղ-խան Ֆերիդ-էս-Սուլթանը։

❖ Կովկասեան իշխանութիւնը յարգել է վրաց երաժշտասիրական ընկերութեան միջնորդութիւնը և թոյլատրել է բանալ Թիֆլիսում երաժշտական դպրոց։

❖ Կովկասեան զինուորական շրջանի շտաբի ղեկուցման համաձայն Կովկասի փոխարքան անհրաժեշտ է գտել ստիպել Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան՝ վճարել Թիֆլիսի զօրաբանակի զօրամասերին հասանելիք բնակարանային փողերը ինչպէս նախկին ժամանակվայ համար, այնպէս և ապագայում՝ իր ժամանակին։

❖ Ալավերդու եպիսկոպոս Դաւիթը վրաց գրագիտաց ընկերութեան նուիրել է 400 րուբլի այն պայմանով, որ այդ գումարը գործադրվի քրիստոնեայ և մահմեդական վրացի երեխաների կրթութեան վրա։ Եպիսկոպոսը խոստանում է այդ գումարը միւս տարի կրկնապատկել։

❖ Մահմեդական «Թարակկի» լրագրի ասելով, այս տարի Պետ. կանանց բժշկական ինստիտուտն աւարտողների թւում կայ և մի Թրքուհի—գնդապետ Աբդուրրահմանի դուստր Զէյնաբ խանումը։ Նա բժիշկ է նշանակված Տաշքենդի գաւառի Խանբուղաղի գաւառամասում։

❖ Կովկասի քաղ. վարչ. բժշկական մասը 1908 թ. Անդրկովկասի ծննդաբերական ապաստարանի հիւանդների և ծննդկանների պահպանութեան համար խնդրել է 15,800 րուբլի։

❖ Մոսկվայում գումարվելիք կլիմայախօսական համագումարին մասնակցելու համար Կովկասի կողմից օգոստոսի վերջերին կը մեկնեն գիւղատնտեսներ Ա. Քալանթար և Կ. Սատունին։

❖ Նուխու հայոց ս. Աստուածածին եկեղեցու ժողովրդականները օգ. 3-ին, երկրորդ անգամ ծխական ժողով կազմելով, բացարձակ քուէարկութեամբ ընտրել են պ. Հ. Առաքելեանին իրանց կողմից պատուիրակ ամսիս 30-ին ներկայ լինելու Շուշում և մասնակցելու կաթողիկոսական պատգամաւորի ընտրութեան։

❖ Քաղաքային ապաստարանների վրա հսկող յանձնաժողովը իր օգոստոսի 9-ի նիստում որոշել է ապաստարանները նորոգելիս երկու ապաստարաններն էլ չը փակել, այլ աչքի առաջ ունենալով, որ խոլերան մուտք է գործել Թիֆլիս և որ այդպիսի դէպքում քաղաքային վարչութիւնը պիտի օգնութեան գայ անտուն-անտէր աղքատ դասակարգին, նախ փակել առաջին ապաստարանը և ապա, երբ պատրաստ կը լինի վերջինս, փակել երկրորդը և բաց անել առաջինը։ Բացի դրանից որոշվել է գիշերօթիկներին մատակարարել թէյ։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

❖ Օգոստոսի 9-ին ոստիկանութիւնը ձերբակալել է Իվան Բարսեղեանին գողացված իրերի մի կապոցով։ Բռնվածը բացատրել է, որ նա այդ իրերը գողացել է Թիֆլիսեցի Արտէմ Աբեջանեանի բնակարանից։

❖ Օգոստոսի 10 ին, երեկ. ժամը 4-ին, Բօրչալուի գաւառի բնակիչ Նիկօլայ Սկիտենկօն, Օրթաճալում քէֆ անելուց յետոյ, վերադառնում էր կառքով իր ծանօթ Դաւիթ Կոտրինոսի հետ։ Վօրոնցովսկայա փողոցում Սկիտենկօն յանկարծ հանում է ատրճանակը և կրակում է կառապանի կողքին նստած Կոտրինոսի վրա և ծանր կերպով վիրաւորում է նրան պարանոցից։ Սկիտենկօն ձերբակալված է։

❖ Օգոստոսի 10 ին, գիշերվայ ժամը 3 ին, Կաղեասկի փողոցում, Սահակեանովի և Ղուկասովի խանութում անյայտ պատճառից հրդեհ ծագեց, որ հանգցրեց հրշէջների խումբը։ Այրվեց խանութի բոլոր ապրանքը 6000 րուբլու արժողութեամբ։ Խանութը ապահովագրված չէ։

❖ Օգոստոսի 9-ի գիշերը Բագիէգմայա փողոցում, ատամնաբոյժ Իոսիֆ Կանդելակու բնակարանից անյայտ անձեր գողացել են 60 րուբլու զանազան շորեղէն։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

❖ Ներքին գործերի մինիստրութիւնը յանձնում է տեղական տնտեսութեան գործերի խորհրդի աշնան սեսսիայի քննութեան հետևեալ օրինագծերը. 1) նահանգական վարչութիւնների հաստատութեան վերակազմութիւնը, 2) գաւառական վարչութիւնների վերակազմութիւնը և 3) կառավարչական գաւառամասերի կոմիսարների խնդիրը։ Նահանգական վարչութիւնների բարենորոգման հիմնական կէտը այն է, որ հաստատվում է նահանգապետի համար երկու օգնականների պաշտօններ, մէկը՝ վարչական մասի փոխ-նահանգապետ, իսկ միւսը՝ նահանգի ոստիկանական մասը կառավարելու համար։ («У. Р.»)

❖ Ներկայ տարվայ սեպտեմբերի 1-ից բոլոր հաշտարարական հաստատութիւնների մէջ աւելանում է դատաստանական տուրքը։ Այդ նորամուծութիւնը պատճառաբանվում է դատաստանական պաշտօնեաների ռոճիկները աւելացնելով։

❖ Օգոստոսի 4 ին Պետերբուրգ են եկել մի խումբ ֆրանսիացիներ, որոնց Պարիզի քաղաքային ինքնավարութիւնը ուղարկել է Շվէյցարիա, Ռուսաստան և Նորվէգիա՝ ծանօթանալու այդ երկրների գեղարուեստական արհեստական դպրոցների գործի հետ։ Խումբը եկել է Պարիզի նախկին քաղաքագլուխ Դիւվալի առաջնորդութեամբ։ Ռուսաստանում նրանք մտադիր են ծանօթանալ գլխաւորապէս բիւզանդական ճարտարապետութեան ոճի հետ, ապա այստեղից նրանք կը գնան Մոսկվա և Կիեվ։ («Р. У.»)

❖ «Рѣчь» լրագրի ասելով, ռուս-գերմանական սահմանագլխի վրա մտցված է հետևեալ նորամուծութիւնը։ Գերմանական սահմանագլխի վրա, Էյդկունեննում, գերմանական իշխանութիւնը ռուսական արտասահմանեան անցագրերը ստուգում է ռուսաց ժանդարմի ներկայութեամբ։ Նոյն տեղում այժմ աւելի են սկսել ուշադրութեամբ դիտել Ռուսաստանից ներմուծվող ապրանքները։

❖ Մոսկվայի միապետական ընկերութեան կից երեխաներին իսկական ռուս ոգով կրթելու համար կազմված կրուժոկը դիմել է պալատական մինիստրութեանը՝ խնդրելով ծովային ցուցահանդէսի համար յատկացված Ալէքսանդրեան այգու մի մասը վիճել իրան այնտեղ իսկական ռուս երեխաների համար զուարճութիւններ կազմակերպելու նպատակով։ («Рѣчь»)

❖ Եկատերինօսլաւին մօտիկ, Պօլտրովկա կայարանում, եկեղեցու մօտ կանգնեցրել են ամբողջ հարաւանեկան գնացքը։ Փեսան և ընկերները մեղադրվում են երկաթուղային կայարանում պատահած էքսպրօպրիացիային մասնակցելու գործում։

❖ Ամբողջ Ռիբինսկը յուզված է հետևեալ քստմնելի գործի առիթով։ Բասկակովի և Տիւմենի անունով կառուցված տեղական մանկական ապաստարանում բժշկական վկայութեամբ հաստատվել է, որ ապաստարանի 11 աղջիկներ, 8—12 տարեկան, լլկված են։ Աղջիկները մատնացոյց են արել ապաստարանի վերատեսուչ Մակարովի վրա, իբրև յանցաւորի, որը 65 տարեկան հասակում է այժմ, ունի չափահաս աղջիկներ։ Մակարովը նահանգական աւագ բժիշկ է և քաղաքում մեծ յարգանք է վայելում։ Իր կեանքի մեծ մասը նա նուիրել է ապաստարանին. այնտեղի երեխաներին նա շատ սիրում էր, նրանց շարունակ նուէրներ էր տալիս և վերաբերվում էր դէպի նրանց հայրական քնքշութեամբ, այնպէս որ իրանք երեխաներն էլ նրան անուանում էին «հայրիկ»։ Մակարովը ներկայումս արձակուրդով գտնվում է Պետերբուրգում։ Դատաստանական քննիչը կարգադրել է անմիջապէս կալանաւորել նրան և ուղարկել Ռիբինսկ։ («Г. М.»)

Типографія „Экономія" Ар. Мутузьянова ст. 6-мм

ՄԱՄՈՒԼ

Զինուորական հարցերին լաւատեղեակ գերմանացի յայտնի գրող գնդապետ Գեոլցն, «Рѣчь» լրագրի ասելով, աշխատում է պատասխանել այն հարցերին, թէ ինչպէս բացատրել Թիւրք զօրքի արտասովոր դերը կատարված անցքերում։ Գեոլցն մատնանշում է երկու պատճառ միայն, որոնք դրդեցին Թիւրք զօրքը ոտք դնել յեղափոխական շաւղի վրա։ Առաջինը թիւրքական զինուորի վատ կացութիւնն է։

«Առաջին տեղը բռնում է մահմեդական ազգաբնակութեան չափից դուրս ծանրաբեռնված լինելը բազմաթիւ տուրքերով, ինչպիսին է զինուորական ծառայութիւնը, որ վարում են միայն մահմեդականները։ Ոչ մի տեղ այդ տուրքը այնքան ծանր չէ, ինչպէս Թիւրքիայում։ Մանաւանդ որ իշխանութիւնը չէր յիշում օրինական շրջանակների մէջ, այլ զինուորական գործում ևս, ինչպէս և միւս բոլոր հարցերում, անսահմանափակ կամայականութիւններ էր գործադրում։ Զինուորները յաճախ ստիպված էին լինում ծառայել օրէնքով սահմանված ժամանակից աւելի։ Աւելի ևս վատթարը այն էր, որ պահեստի զինուորները, յաճախ ընտանիքի հայրեր, շարունակ կրկին ու կրկին անգամ բաժանվում էին իրանց օջախից կամ կռիւ մղելու մակեդոնական շարժման դէմ, կամ խռովութիւններ գործելու համար Հայաստանում և կամ թէ պատերազմելու խռովարար արաբների դէմ։

«Պահեստի զինուորներից կազմված զօրամասերը քանիցս անգամ ստիպել են իրանց արձակել տները ապստամբութեան դիմելով։

«Ապա մենք բոլորս էլ գիտենք, որ զինուորների ռոճիկներն էլ վճարվում էին անկանոն կերպով և որ Բարձրագոյն Դուռը, կարելի է ասել, համարեա, սկզբունքօրէն ուշացնում էր նրանց ռոճիկների վճարումը կէս և երբեմն էլ աւելի տարով։ Դարձեալ ապստամբութեան դիմելով միայն ստիպում էին կանոնաւոր վճարել։

«Զենք խօսի հագուստի մասին, որը անբաւարար է նոյնիսկ Պօլսի մէջ։ Աւելի վատթար պայմաններ են տիրում սնունդի գործում։

«Բայց այդ բոլորը կարող էր հող միայն պատրաստել խռովութեան համար. մինչդեռ դէպի փադիշահը ունեցած աւանդական հաւատարմութեան համար հարկաւոր էին լրացուցիչ պատճառներ, որպէսզի այդ խռովութիւնը արդարև բռնկվէր։ Դրա համար անհրաժեշտ էր, որ երիտասարդ-Թիւրքերի շարժումը բռնկէր օֆիցերների մեծ մասին։ Իսկ այդ բանը տեղի ունեցաւ մասամբ լրտեսութեան և ամեն մի ազատ երևոյթ տմարդի կերպով ճնշելու անտանելի սիստեմի շնորհիւ։ Սակայն գլխաւոր պատճառը շատ խորն է։ Նրա գործը սկըսվեց այն օրից, երբ գերմանական գնդապետ ֆոն դէր-Գոլց փաշան իր ձեռքն առաւ Թիւրքաց զօրքի վերակազմութեան գործը և աշխատեց մատակարարել նրան ժամանակակից եւրոպական կրթութիւն ստացած օֆիցերների կորպուս։ Պատմութեան համար իբրև հեգնութիւն է հնչում այն, որ լօյալ, միապետական հաստատութիւնների մէջ սնված պրուսացի օֆիցերը անգիտակցաբար դարձաւ Թիւրք յեղափոխութեան պատճառը։ Նա ստեղծեց այն զինուորական դպրոցը, որից դուրս եկաւ օֆիցերների ներկայ մատաղ սերունդը։ Նա էլ հոգ տարաւ, որպէսզի նրանց ուղարկեն օտար պետութիւնների մօտ, ուր նրանք իւրացրին արևմտեան աշխարհահայեացքները։ Որքան շատ էր աւելանում նրանց թիւը, այնքան ուժեղանում էին նրանք զօրքի մէջ, և աւելի ևս զգում նոր ոգու պահանջները [illegible] բռնակալութեան, լրտեսութեան, կամայականութեան և նեպոտիզմի։ Թիւրքական օֆիցերների հին կազմը, որի մէջ գերակշռող դեր էին կազմում անգրագէտները, երբեք չէր կարող կողմնակից լինել երիտասարդ Թիւրքերին. նա չափազանց տգէտ էր և հոգով ու մարմնով հաւատարիմ էր փադիշահին։ Ներկայումս զինուորական դպրոցներից դուրս եկած օֆիցերները ահագին թիւ են կազմում Թիւրքաց զօրքի մէջ։ Վերջին բոլոր խռովութիւնների մէջ օֆիցերները մասնակցում էին։ Դա պարզ նշան էր, որ վստահել զօրքին արդէն ուշ էր»։

Գեոլցն կարծում է, որ, երբ կը չքանայ ընդհանուր ոգևորութիւնը, պալատական շրջանները իրանց սովորական ինտրիգներով փորձ կանեն պառակտում առաջ բերել օֆիցերների շարքերում։ Այն ժամանակ միայն կիմացվի, թէ որքան Թիւրք օֆիցերութիւնը արդարև ներշնչված է առաջադիմական սկզբունքներով։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Փարիզ, 14/1 օգոստոսի

Ձեզ հաճելի է եղել հեռագրական լուրով հաղորդել ձեր ընթերցողներին, թէ Իգդիրում կատարված կաթողիկոսական պատուիրակների ընտրութեան ժամանակ գրեթէ [illegible] անաչառ [illegible]։

Ցաւում, ձեզ անհաճոյ չի լինի հրատարակել և հետևեալը։

Իմ պատուական հայրենակիցներից և ոչ ոքին ես գրաւոր կամ նոյնիսկ բերանացի արտօնած չեմ եղել իմ անունը քուէարկել այդ ընտրութեան ժամանակ, ևս առաւել, որ ես Թիֆլիսում արդէն ընտրված եմ պատուիրակ Ջգրաշէնի եկեղեցու ծխականներից։ Երևանի տ. Թեմակալի ուշադրութիւնն եմ հրաւիրում այս տգեղ և ապօրինի երևոյթի վրա։

Ա. Ահարոնեան

Ս. ՕՐՄԱՆԵԱՆԻՆ ՍՈՒԼԹԱՆԸ ՉԷՐ ՃԱՆԱՉՈՒՄ

Պ. Ս. Ջերբեզեան «Մշակի» այս տարվայ № 166-ում մի ընդարձակ պաշտպանողական և ջատագովական էր տպել Օրմանեան սրբազանի մասին, որը վերջացրել է այս խօսքերով. «Այսօր եթէ Թիւրքիայի հայութիւնը իբրև ազգութիւն, իբրև մի ամբողջութիւն գոյութիւն ունի Թիւրքիայում և ազատութիւն պէտք է վայելէ այդ Օրմանեան պատրիարքի օպպորտունիզմ քաղաքականութեանն է պարտական միայն, առանց որի նա միանգամայն ջնջված կը լինէր։ Ով ականջ ունի լսելու, թող լսէ»։

Անտարակոյս՝ ականջ ունեցողները կը լսեն, բայց խելք ու բանականութիւն ունեցողները, այդ լսելուց յետոյ, ինչ կանեն, կամ ինչ կասեն—այդ ուրիշ խնդիր է։

Պ. Ջերբեզեան, ի միջի այլոց, առաջ է բերում „Тифл. Нов.“-ի № 35-ի դիտողութիւնը՝ թէ «Օրմանեանը պատրիարք է ընտրված սուլթանի նախապէս յայտնած ցանկութեան համաձայն և նա սուլթանի ընտրած մարդն է», և իբրև հերքում՝ իր կողմից գրում է. «Առաջ քան պատրիարք ընտրվելը Օրմանեան սրբազանը որևիցէ քաղաքական հանգամանք ունեցող պաշտօն չէ վարել, ոչ պատրիարքարանում, ոչ ազգային ժողովում և ոչ այլուր, որպէսզի սուլթանը նրան ճանաչէր, ծանօթ լինէր նրա քաղաքական հայեացքներին և նրան ընտրել տար»։

Ի՞նչպէս թէ և «ոչ այլուր»։ Իսկ Էրզրումի առաջնորդութիւնը, իսկ Կ. Պօլսի քարոզչութիւնը՝ ոչինչ «քաղաքական հանգամանք» չէ՞ն կրում։ Անկախ այդ ամենից, մի՞թէ պ. Ջերբեզեան չը գիտէ, որ Տաշեան և Նուրեան, նախ քան ընտրութիւնը, պատրիարքական եռթնանուն ցանկը կազմել էին տուել Եըլդըզում։ Մի՞թէ չը գիտէ, որ Տաշեան թէ Նուրեան սուլթանի աւելի հաւատարիմ աչքերն էին, ականջներն էին, սիրտն էին, քան թէ սուլթանի իր աչքերը, իր ականջները, իր սիրտը...

Բայց բերենք այլ փաստեր, որ Օրմանեան սրբազանին սուլթանը—Եըլդըզը—ճանաչելիս է եղել և որ ընտրութիւնը՝ «սուլթանի նախապէս յայտնած ցանկութեան համաձայն է եղել»։

Ֆրանսիական լրագիրներից առնելով «Մշակ» 1896 թ. իր № 140 ի մէջ գրում էր. «Օրմանեան եպիսկոպոսի յարաբերութիւնները կառավարութեան հետ միշտ լաւ են եղել։ Պատրիարքական ընտրելիների ցուցակի մէջ Օրմանեան եպիսկոպոսը վերջին տեղն էր գրաւում (նուիրը հեռատեսութիւն)։ Ուրեմն այդ ցուցակը, նախապէս պալատի քննութեան ենթարկվելով, չէր կարող հաւանութիւն չը գտնել»։

Այդ էլ բաւական չէ։ Թող խօսի ու վկայի Թիւրքական կիսապաշտօնական «Մալումաթ» թերթը, որ դեռ 1897 թ. իր էջերի մէջ տպագրելով Օրմանեան սրբազանի մեծ ծաւիր պատկերը՝ գրում է ի միջի այլոց. «Օրմանեան էֆենդի իր գտնված ամեն պաշտօններու մէջ նորին կայսերական վեհափառութեան բարեհաճութեան հակառակ ունէ ընթացքի մէջ չգտնվելով, կատարեալ հաւատարմութիւնով ի գործ դրած է իր պարտականութիւնները և անոնցմէ մազաչափ չէ շեղած»։

Իսկ ինչ վերաբերում է Օրմանեանի օպպորտունիզմ քաղաքականութեանը, թող ընթերցողները առ այժմ չը մոռանան ի միջի այլոց և յետագայ լրագիրների յետագայ խօսքերը։

«Առաջին մեծ հարուածը ազգային ներժանապատուութեան տուաւ Օրմանեան այն ուղերձով, զոր ներկայացուց սուլթանին անկէ ընդունուած օրը։ «Դէյլի Նիւզ» ամենածանր կերպով կը պախարակէ նոր պատրիարքը, որ հոսուած այնքան արիւնէ յետոյ տակաւին հայ ազգին փրկութիւնը կը յուսայ Համիդէն։ Եթէ ամենէ հեզնող եկեղեցականը չէ Օրմանեան, ամենէ ստորաքարշն է»։ («Մշակ» 1896 № 149)։

«Եւ Օրմանեան պատրիարքը, հայոց հոգևորականութիւնը այն աստիճան ստորաքարշութեան են հասցրել, որ ուղերձներ են կազմում և ստորագրում այդ ամօթալի ուղերձներին»։ (Նոյն «Դէյլի Նիւզ»—«Մշակ» 1897 № 151)։

«Berliner Tagerblatt» գրում է. «Ոչինչ չարաւ հայոց պատրիարքը և չարդարացրեց հայերի սպասելիքները։ Փոխանակ եռանդուն կերպով պաշտպանելու իր հօտը, նա միմիայն պաշտօններ տուեց իր ազգականներին, և դա ճիշտ է»։ («Մշակ» 1897 թ. № 89)։

Հայր Շարմառն իր՝ «Մեռնող Հայաստան և քրիստոնեայ Եւրոպա» վերնագրով գրուածքի մէջ ցոյց է տալիս, որ՝ «մինչև այժմ եղած խմբովին կոտորածների քաղաքականութիւնը Հայաստանում տեղի է տուել, մանաւանդ աւելի հեռաւոր գաւառներում, ծածուկ եւ սիստեմատիկաբար ոչնչացմանը»։ («Մշակ» № 80)։

Միայն անկեղծ հայասէր «Իկդամ» թերթն է, որ, հիացած Օրմանեանի օպպորտունիստ քաղաքականութեան ու դիւանագիտութեան վրա, գրում է. «Հայոց պատրիարքարանի այժմեան գործունէութեան եղանակը միակ ուղիղ ճանապարհն է ամբողջ հայ ժողովրդի բարօրութիւնը ապահովելու համար»։ («Մշակ» № 132)։

Ով ականջ ունի լսելու ու խելք ունի դատելու—թող այս ամենը ևս լաւ լսի և դատի։

Մեսրոպ ա. ք. Մելեան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

9 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ներքին գործերի մինիստրութեան խնդրածաւորոյց են եղել թոյլատրելու գումարել Պետերբուրգում կամ Մոսկվայում ռուս առևտրական փոխադրողների համագումար։ Համագումարի նպատակն է մերձեցնել արտադրողների և սպառողների շահերը։

ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿ։ Օգոստոսին դադարեցնում է իր գոյութիւնը զէմստվային հասարակական բարեգործական կազմակերպութիւնը։ Երկաթուղային ճանապարհներով գաղթողներին կազմակերպութիւնը տուել է 23,0000 ճաշ, Ամուրի ջրային ճանապարհներով գաղթողներին՝ 28,00։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Սենատը բացատրեց, որ սապնագործարաններ բանալու համար մասնաւոր անձանց թոյլտուութիւն տալը դուրս է քաղաքային հասարակական կառավարութիւնների իշխանութիւնից և ամբողջովին կախված է տեղական նահանգական իշխանութիւնից։

Սենատը բացատրեց, որ այն գիւղատնտեսական ընկերութիւնները, որոնք ի թիւս այլ ապրանքների պարապում են նաև կարի մեքենաների առևտուրով, պէտք է ենթարկվեն պրոմիսլային հարկատուութեան իբրև 2-րդ կարգի առևտրական ձեռնարկութիւններ։

Բանտային գլխաւոր վարչութիւնը ուղարկել է նահանգապետներին զինուորական խորհրդի հաստատած այն կանոնները, որոնց համաձայն բանտային վարչութիւնները արտօնվում են չը վճարելու ինտենդանտութեան համար կապալներ և մատակարարումներ վերցրած ժամանակ պահանջվող գրաւականները։

Սենատը բացատրեց, որ ոստիկանութեան պաշտօնեաների զինման ծախքերը պէտք է մտած լինեն իւրաքանչիւր քաղաքի պարտադիր ծախքերի ցուցակում, անկախ նրանից—յիշված կա՞յ այդպիսի ծախք ամեն մի քաղաքի համար հրատարակված ոստիկանութեան ցուցակների մէջ թէ ոչ։

Վերադարձաւ մինիստրների խորհրդի նախագահ Ստոլիպինը արձակուրդից և ստանձնեց իր պաշտօնը։

ՎԵՆԳՐՕՎ։ Հողային աշխատանքներ կատարելու ժամանակ հրէական աղօթատան բակում գտնվեց հողի մէջ փորված մի արկղ ուժանակով և ռումբերի կաղապարներով։

ՕԴԵՍՍԱ։ Երեկոյեան Ուսպենսկի փողոցում մի անյայտ մարդ կրակեց [illegible] Կաուֆմանի վրա, որ սկզբում ստացել էր մի քանի սպառնական նամակներ փողի պահանջով անիշխանականներից։ Կաուֆմանը ծանր վիրաւորված է փորից և ոտքից։

10 օգոստոսի

ԲԻԵԳՈՒՆԻՑԻ։ Իր զօրքի գլուխն անցած եկաւ արևմտեան զօրաբանակի հրամանատար գ-լ բարոն ֆօն-Աշեբերգ, որ բաղդ ունեցաւ բացատրութիւններ տալու Թագաւոր կայսրին իր զօրքի դրութեան մասին։

ՕՄՍԿ։ Առաւօտեան եկաւ նոր նշանակված գեն.-նահանգապետ գեներալ Շմիդտը։

ԿԻԵՎ։ Նահանգապետի նախագահութեամբ և կրթական շրջանի, նահանգական տեսուչների և միւս անձանց մասնակցութեամբ կայացաւ մի խորհրդակցութիւն ուսանողութեան վրա հսկողութիւն սահմանելու հարցի մասին։ Որոշվեց կազմել յատուկ յանձնաժողով, յանձնարարել նրան անյապաղ միջոցներ մշակել միջնակարգ դպրոցական մակերևոյթը բարձրացնելու համար և սահմանել հսկողութիւն դպրոցից դուրս։

ՍԱՐԱՏՕՎ։ Կամիշինսկի գաւառում անցաւ հեղեղ։ Ջուրը երեք գիւղերում տարաւ շինութիւնները, փչացրեց ցանքսերը և այգիները։ Խեղդվեցին երկու երեխայ, շատ թռչուններ և մանր անասուն։

ԲԵԼԳՐԱԴ։ Արդարադատութեան, հասարակական աշխատանքների և առևտրի մինիստրներ նշանակվեցին երիտասարդ արմատականներ Տիմոտիևիչ, Սարնիչ և Գլավինիչ։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու. վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՈՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Ե. ԳՈՒՐԳԵՆՕՎ—12—12½ ժ. կանանց և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Ե. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Ս. Մխիթարեանց
Անցեալ տարիների նման ընդունում է հիւանդներին վեներական և մորթու ցաւերով Կիսլովոդսկում, հիւրանոց «Ռոսսիա»։
(ա. օ.) 100—100

Թիֆլիսի նահանգապետի թոյլտուութեամբ
Լեւոն, Կաստրիճե, Ալեքսանդրա և Լուիզա
ՄԵԼԻՔ-ՆՈՒԲԱՐԵԱՆՆԵՐԸ
լինելով մեծ չքաւորութեան մէջ, դիմում են բարի մարդկանց կարեկցութեան և օգնութեան։ Նուէրները խնդրվում է ուղարկել այս հասցէով՝ Прiютская ул. д. 16. 3—1

Վաճառվում են՝
Յովհ. Արարաջեան. «ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ» պատկերազարդ. I տ.—25 կ., II տ.—30 կ. III տ.—40 կ.։
Ս. Արարաջեան. «ՏԱՐՐԱԿԱՆ ԹԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ», գինը 20 կ.։
Պահեստները. կազմողի մօտ՝ Александрополь, Ов. Арабаджiану, Թիֆլիսում՝ Книж магазинъ „Гуттенбергъ“, Բագւում՝ „Сотрудникъ“ գրավաճառանոցում, Կարսում՝ Յովսէփ Սրաբեանի մօտ։ Վաճառվում են նաև Կովկասի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։
Գրավաճառներին ձեռնտու պայմաններ
(կ. ե.) 10—4

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ
ՅՈՎՍԷՓ
Մելիք-Ջհանեանցի
Церковная ул. д. № 11. (близъ памятника Воронцова)
Ընդունվում են աշակերտներ [illegible] և [illegible] և պատրաստում են բոլոր միջնակարգ դպրոցների համար։ Աւանդվում են ռուս, հայ, գերման, լատին և ֆրանսիական լեզուներ։ Այդտեղ կազմակերպված են և խմբական պարապմունքներ միջնակարգ դպրոցների բարձր դասարաններ մտնել ցանկացողների համար։ Աշակերտներ ուսանելու համար հրաւիրված են մասնագէտ ուսուցիչներ։ Ի միջի այլոց աւանդվում է և իտալերէն։
(օ. մ.) 20—15

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ
ՀԱՇՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշւապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների մինիստրութեան ուսումնասիրական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում։
Սովորեցնում և պատրաստում են
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ անձանց, գործնական ձևով հաշւապահութիւն և ուրիշ մասնագ. առարկ.
Ներկայ տարվայ կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաներից աւանդվելու է ձրիաբար քաղաքական տնտեսութիւն (политическая экономiя) և որոշ վճարով կամաւոր սղագրութիւն (стенографiя)։
Ընդունելութիւնն ամեն օր, ժամը 4-ից մինչև 7-ը երեկոյեան, 9-ից մինչև 10-ը առաւօտեան։ Պարապմունքները սկսվելու են 1908 թ. սեպտեմբերի 15-ից, պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ։ Ծրագիրը ուղարկվում է ձրի։
Դասընթացքը աւարտողներին տրվում են, ֆինանսների մինիստրութեան թոյլատրած ծրագրի համաձայն, ատեստատներ։
Դրանից անկախ՝ բացված է քիչ պատրաստականութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թուաբանութեան համար։
Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում. Н. В. Абраамяну, Николаевская ул., № 22, ամեն օր։ Վերևում յիշած ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ ԳԻՆՆ է 3 ր. 50 կոպէկ։ 20—6
(կ. ե. հ.)

ԼԻԱԿԱՏԱՐ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ
Լիակատար բժշկութիւն ՍԻՖԻԼԻՍԻ և նրա հետևանքների
Ի. Ավրախովի ԵՂԱՆԱԿՈՎ.
Որպէս բժշկվել սիֆիլիսից բոլոր շրջաններում և ձևերում նրա հետևանքներից, այսինքն կաթուածներ, տաբէս, ոսկրացաւ, բծեր, վէրքեր և այլն, նոյնպէս խլացաւ և էկզեմա։
Բժշկութիւն առանց սնդիկի և եօդի անվնաս բուսական բալզամով։
Կատարեալ բժշկութիւն 2—4 շաբաթում առանց վերադարձների։ Բրօշիւրը ուղարկվում է երեք 7 կոպէկանոց մարկաներ ուղարկելուց։ Շատ կան նօտարով վաւերացրած շնորհակալութիւններ և բժիշկների վկայականներ։
Հեղինակի մօտ կարելի է ստանալ ձրի՝ С.-Петербургъ, Колокольная ул., № 11, собств. домъ.
ՀՆԴԿԱԿԱՆ ԲԱԼԶԱՄ ծախվում է միմիայն Դ. ԱՎՐԱԽՕՎԻ մօտ СПБ. Колокольная ул., № 11,
ՍԻՖԻԼԻՍԻ
(հ. ե.)

ԽՐՕՆՕՄԵՏՐ ԺԱՄԱՑՈՅՑ
ՓԱՐԻԶԵԱՆ ԺԱՄԱՑՈՅՑ „ԽՐՕՆՕՄԵՏՐ“
ոչնչով չէ տարբերվում իսկական ոսկէ ժամացոյցից, ոսկեջրված է էլեկտրականութեան օգնութեամբ իսկական ոսկու երեք շերտով։ Ընթացքը ստուգված է պարիզեան հանրադիտարանի ժամերով և այս դէպքում իրանից ներկայացնում է ժամացոյցի տեխնիկայի վերջին խօսքը։ Խփանները (крышки) գեղեցկացված են շնորհալի քանդակով։ Գինը՝ տղամարդկանց բաց № 6-ը 6 ր. 50 կ. և փակ № 13-ը 8 րուբլի։
Կանանցը լինում է միայն փակ՝ 9 րուբլի արժեցող։
Փաթեթները ուղարկելու համար գնողներից վերցվում է—Եւրոպական Ռուսաստան 50 կ. և Ասիական՝ 75 կ.։ Ծրարելը ձրի։
Ժամացոյցն ուղարկվում է անմիջապէս պատուէր ստանալուց յետոյ։
Գրաւական ուղարկողներին ձրիաբար տրվում է ժամացոյցի շղթայ։
Պատուէրները հասցէագրել՝
Московскому Центральному складу часовъ
Москва, домъ Виноградова, 126. 20—3
(ե.)

Типографiя „Экономiя“ Ав. Мугдусiакопова съ С-ми Большая Банкская ул. № 3.